

Հ. ՊԱՐՈՆՅԱՆ



891.99

7-34

ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

19 NOV 2011

891.99
7-34 *ապ*

ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՄԵԾԱՊԱՏԻՎ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ
ՊՏՈՒՅՏ ՄԸ ՊՈԼՍՈ ԹԱՂԵՐՈՒ ՄԵՋ

1001
2776

—
ՊՐԱԿ ԱՌԱՋԻՆ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԳՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1927

ՀԱԿՈՒ ՊԱՐՈՆՅԱՆ

(1842 — 1891)

Կազմեց՝ Հ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Արևմտահայ գրողներից շատ քչերին ե հաջողվել վերջ ժողովրդականություն ձեռք բերել մեզանում, Անդրկովկասում: Այդ քչերից առաջինն ե տաղանդավոր յերգիծաբան Հ. Պարոնյանը, վերի մի շարք գրվածքները հրատարակվեցին և վերահրատարակվեցին Թիֆլիսում, իսկ կատակերգությունները, գլխավորապես «Մեծապատիվ մուրացկանները» մինչև այժմ ել տեղ ունեն մեր թատրոնական ուսուցիչներում:

Պարոնյանը գրական ասպարեզ յելավ Պոլսում վաթսուհինական թվականների վերջին և կարճ ժամանակից հետո, 1872 թվից սկսած, յերբ իր ձեռքն առավ Սվաճյանի «Մեղուն», արդեն բավական հռչակ եր վայելում:

Չնայած Պարոնյանի «Մեղուն» շատ կարճ կյանք ունեցավ, բայց նրա անունը և գրվածքները նախ իր հրատարակած «Թատրոն» ամսագրում, ապա զանազան պարբերականներում և վերջը հռչակավոր «Խիկար»-ում և առանձին գրքերով ավելի լայն ժողովրդականություն ստացան: Մինչև իսկ Թիֆլիսում հրատարակվող «Փորձ» պարբերականն իր եջերը տրամադրեց տաղանդավոր յերգիծաբանին՝ տպագրելով նրա «Հոսոսի ձեռատետրը»: Արդեն ավելի քան յերկու տասնամյակ, նյութական և բարոյական զրկանքներով, Հակոբ Պարոնյանը ծառայեց հայ գրականու-

Թշանը՝ ունենալով իր համակիրների խմբակները և հակա-
ռակորդների բանակը: Բավական է շեշտել, վոր նրա հրա-
տարակած «Թատրոն» ամսագիրը չորս տարվա ընթացքում
ուժի առաջամ դարձրի դատապարտվեց և վերջնականապես
դադարեց սուլթանի կառավարութան կարգադրությամբ,
պատրիարքարանի դիմումի հիման վրա:

Հասկանալի չե, թե ինչու:

«Ազգին գործերը և բախտը» Թուրքահայաստանում
այդ ժամանակներն իրենց ձեռքն եյին առել պոլսահայ
բուրժուազիան ու սուլթանական կառավարութան պնա-
կալեզ հայ պաշտոնյաները: Այդ ազաններն ու եֆենտիները
սրտառուչ դաշն կնքած կղերի—պատրիարքարանի հետ,
ստեղծել եյին իրենց յեռապետությունը պոլսահայ և Թուր-
քահայ կյանքում և անվերջ կամայականություններով ու
կեղեքումներով ճնշում եյին աշխատավորությանը: Հասա-
րակական ամեն մի գործ այդ «վսեմաշուքների» և «ազ-
նավաշուքների» մենաշնորհն եր: Մանր-բուրժուական ին-
տելիգենցիայի խոշոր տոկոսը, տիրողների աչքից չընկնե-
լու համար, համակերպվում եր կղերի պահպանողական
գործելակերպին, հարմարվում «ազնավաշուք» պաշտոնյաների
ժողովրդավաճառ արարքներին և քծնում բուրժուազիայի,
կամ ինչպես Պարոնյանն է ասում,—կտավապետության,
յերկաթապետության և բրդապետության դրամի քսակի
առջև: Խեղդված եր ամեն մի ազատ քննադատական ձայն,
պատժվում եր ամեն մի համարձակ կարծիք կաշառքի,
քսության ու մատնության միջոցով:

Սակայն մանր բուրժուական լիբերալների շարքում
կային «ըմբոստներ», վորոնք այս կամ այն ձևով փորձե-
ր եյին անում շարժել հասարակական այդ նեխած ճահիճը,
ուղղակի կամ անուղղակի հարվածել այդ արտոնյալ դա-
սերի քմահաճ տիրապետությունը և վերջինիս ստեղծած
այլանդակ բարքերը:

Լիբերալ ինտելիգենցիայի այդ համարձակներից մեկն
եր Հակոբ Պարոնյանը: Դժվար է մի առ մի հեշտակել,
թե ինչպիսի հասարակական խոցեր եյին յենթարկվում
Պարոնյանի յերգիծական սուր նշտարին, այնքան բազմա-
զան են նրանք: Նրա յերգիծանքի շեշտակի սլաքները
հասնում եյին մերթ խավարամիտ պորտաբույծ կղերին,
մերթ սնապարծ եֆենտիներին ու կաշառակեր «վսեմա-
շուքներին», մերթ ազգային վարչություն կոչված խո-
սարաններին: Նրա ծակող յերգիծանքից ազատ չեյին
մնում այդ ճահճացած մթնոլորտում քսության և շողոքոր-
թության վարժված ծախու մամուլն իր «արժանավոր»
խմբագիրներով, դրամի ուժն որհներգող գիրն ու գրակա-
նությունն իր շնորհագուրդ բանաստեղծներով, Թատրոնն
իր Թերուս դերասաններով: Նրա խուզարկու գրիչն առատ
նյութ եր գտնում կուլտուրայի արտաքին կեղևը յուրաց-
րած հասարակական կենցաղի, ընտանեկան բարք ու վարքի
վոլորտներում, հարվածում շրջապատի բոլոր պակասավոր
կողմերը: Բայց ամենից շատ «Ազգային շոշերն» եյին,
վոր հարկադրվում եյին կլլել Պարոնյանի «քաղցր» հաբերը:

Պարոնյանը տեսնում և հասկանում եր, վոր մարդն
այլասերվել է, այլանդակվել, վոր մարդկային հասարակու-
թյունը դարձել է զանազան այլանդակ դիմակների մի
հավաքածու: Սակայն նրան, իբրև լիբերալ ինտելիգենտի,
ամենևին չեր զբաղեցնում այն միտքը, վոր մարդն ամ-
բողջովին կախումն ունի հասարակական միջավայրից և
նրա այլասերումն արդյունք է տիրող հոռի հասարակա-
կարգի, վոր հավասարապես այլանդակում է թե իշխա-
նավորին, թե ստրուկին, թե հարստին և թե աղքատին:
Պարոնյանը չեր ել կարող ըմբռնել, վոր իր իդյալը՝ իս-
կական մարդկային դեմքը, լիակատար մարդը հնարավոր
է միայն մասնավոր սեփականության վերացման դեպքում:
Բայց և այնպես Պարոնյանի յերգիծական սլաքներն ուղղված

են հենց այն այլանդակութիւններէ դեմ, վորոնց ծնողներն են բռնակալ միապետութիւնը և ֆեոդալ-բուրժուական հասարակութիւնը, վորոնք իրենց հերթին մասնավոր սեփականատիրական անտեսակարգի ծնունդն են: Պարոնյանի հարվածներն անուղղակի կերպով հասնում են տիրող սոցիալ-անտեսական և քաղաքական կարգերին: Հենց այդ տեսակետից ել գնահատելի յեն մեզ համար:

Ազգային-հասարակական ընտանեկան այդ բազմազան արատներին զուգահեռ բազմազան ե նաև Պարոնյանի հարվածի յեղանակը, յերգիծանքի մեթոդը: Յերբեմն հընչում ե նրա լիաթոք ուրախ քրքիշը, յերբ կյանքի և կենցաղի զավեշտական կողմն ե նրա գրչի տակ ընկնում, յերբեմն ծիծաղում ե նա արտասուքների միջից, յերբ հասարակական ծանրակշիռ թերութիւններն ու այլանդակ կողմերն ե հարվածում, յերբեմն ել հրապարակախոսի կուռ մուրճի ոգնութիւնն ե դիմում, յերբ լուրջ խոսքի և քննադատութեան անհրաժեշտութիւնն ե զգում: Յեւ այդ բոլոր դեպքերում ել, հազվադեպ բացառութեամբ, Պարոնյանը պահում ե հմուտ և տաղանդավոր յերգիծողի հավասարակշռութիւնը, առանց կորցնելու մանրագնին և պաղարյուն դիտողի և վարպետ վերլուծողի ունակութիւնը: Դրա համար ել նրա յերգիծանքը խորն ե ու լայն, վոր հավասարապես տարածվում ե հասարակական և կենցաղային բոլոր նման յերևույթների վրա, վորտեղ և յերբ ել նրանք գոյութիւն ունենան:

Շատ բան ե հնացել Պարոնյանի մանավանդ զուտ տեղական բնույթ կրող գրվածներից: Բայց շատ գրվածներ ել պահել են իրենց թարմութիւնը մեզ համար: Նրա գրվածներից շատ հատվածներ մեծ ախորժակով կարգացվում և լսվում են նաև այսօր, ուրախ և առողջ ծիծաղ հարուցելով մեր մեջ: Յեւ հենց դրա մեջ ե Պարոնյանի տաղանդի մեծութիւնը, վոր ավելի քան աչքի յե ընկ-

նում, յերբ ի նկատի յենք առնում, վոր Պարոնյանն իրեն համարժեք յերգիծող չի ունեցել մեր մեջ: Վոչ իրենից առաջ, վոչ ել իրենից հետո մինչև մեր օրերը: Պարոնյանն ունեցել և ունի հետևողներ և աշակերտներ, բայց վոչ մեկը դեռ չի հավասարվել նրան իր շնորհքով և վարպետութեամբ:

Քիչ գործեր չի թողել Պարոնյանն իրենից հետո: Հայտնի յեն նրա «Ազգային ջոջերը», «Մեծապատիվ մուրացկանները», «Հոսոսի ձեռատետրը», «Ծիծաղ», «Պտույտ մը Պոլսո թաղերուն մեջ», «Բաղդասար ախպար», «Քաղաքավարութեան վրասները», «Արևելյան ատամնարույժ»:

Յեւ այդ բեղմնավոր գրիշը գործել ե զրկանքների ու հալածանքների մեջ, չզավաճանելով հրապարակախոս յերգիծողի կոչմանը: Նա հանձն ե առել յերբեմն յերբեմն դասատուի կամ մանրավաճառի դերում լինել որվա ապրուստը հայթայթելու համար, բայց յերբեք չի լքել իր ըմբոստ և համարձակ վոգին, յերբեք ծոնկի չի յեկել փողի տոպրակների, տգետ և բթամիտ աղաների և եֆենտիների, կղերի և «ազգային ջոջերի» առջև: Հենց այդ խիզախ վոգով ել, բայց թույլ թոքերով ու կրծքով, նյութական աննպաստ պայմաններից քայքայված որգանիգմով, Պարոնյանը վայր դրեց իր բեղմնավոր գրիշն ընդմիշտ: 1891 թվի գարունը վերջ տվեց նրա 49 ամյա կյանքին:

Սակայն տաղանդավոր յերգիծաբանն իր գրվածներով չեր կարող մոռացութեան տրվել:

Այժմ ել, Պարոնյանի մահից 35 տարի հետո, հին արժեքների վերագնահատութեան մեր օրերին, խորհրդային հասարակութիւնը Պարոնյանին տալիս ե իր արժանավոր տեղը հայ գրական ասպարեզում՝ ընդգծելով նրա գրական-հասարակական արժեքն իր ժամանակի և ներկայի համար:

Հ. Հովակիմյան.

ՄԵԾԱՊԱՏԻՎ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ.

Տրապիզոնից ամուսնանալու նպատակով Պոլիս ե գնում միամիտ, բայց փառամոլ հարուստ գավառացի Աբխսողոմ աղան: Այդ հարուստ գավառացու Պոլիս մտնելը վտառի յե հանում Պոլսահայ զանազան խավերի ներկայացուցիչներին, վորոնք ոգտվելով նրա միամտությունից՝ և փառասիրությունից՝ քաղաքավարի կերպով կողոպտում են նրան: Աբխսողոմ աղան ստիպված ե լինում թողնել ամուսնանալու միտքը և փախչել Պոլսից:

Ահա այդ յերգիծական պատմվածքի նյութը, վոր այնպես վարպետորեն հյուսել և զարգացրել ե տաղանդավոր յերգիծաբանը:

«Մեծապատիվ Մուրացկանները» մի գեղադիտակ ե (կալեյդոսկոպ), վորի մեջ մեր աչքի առաջ են կանգնում պոլսահայ մի շարք տիպեր իրենց ամբողջ հասակով և մերկությամբ, այլ և գավառացի փառասեր կալվածատեր առևտրականը իր խորը տգիտությամբ և միամտությամբ: Թաղական-ազգային խնդիրներով զբաղվող և սրճարանների մշտական անդամ պարապորդը, բանաստեղծի հավակնություն ունեցող դատարկաբանը, խմբագիր, բժիշկ, լուսանկարիչ, քահանա և այլն,—բոլորն ել իրենց արժանի բաժինն են ստանում տաղանդավոր գրողի յերգիծական մշտրակի հարվածներից: Դրամատիրական կարգերի այլասերած մարդուկների գունավորած պատկերն ե տալիս Պարոնյանը՝ զրկելով նրանց իրենց ամենուրյա դիմակից:

Տիպերը գծված են կենդանի՝ համեմված մեծ սրամտությամբ: Կեղծավորության, քսության, ազգի և ազգային զգացմունքի շահագործման, փառասիրության և նման մոմենտները դրսևորված են շատ ցայտուն:

«Մեծապատիվ մուրացկաններ»-ից բերում ենք վեց հատված—«Աբխաղումը և խմբագիրը», «Աբխաղումը և բանաստեղծը», «Աբխաղումը և լուսանկարիչը», «Աբխաղումը և բժիշկը», «Աբխաղումը և դերասանը», «Աբխաղումը, սափրիչը, քահանան և Շուշանը», վորոշ կրճատումներով:

Հ. Հով.

ԱՌԻՍՈՂՈՄԸ ՅԵՎ ԽՄԲԱԳԻՐԸ

Հազար ութը հարյուր յոթանասուն... Հեմ հիշեր քանիին, սեպտեմբերի յերեսունը մեկին—ներեցեք յերեսունին պիտի ըսեյի, վասնզի սեպտեմբերն յերեսուն որ միայն ունի—յերկար և ընդարձակ թիկնոցի (վերարկու) մեջ փաթտված միջահասակ և գիրուկ մարդ մը, վոր Տրապիզոնի շոգենավեն նոր յելած էր, Ղալաթիո (Պոլսո թաղերից մեկն է) նավամատույցին վրա կայնած՝ նավակե մը իր սնտուկները հանել կաշխատեր:

Կտեսնե՞ք, վորչափ պարզությամբ սկսա: Պատմությունս հետաքրքրական ընելու ջանքով և անկից քանի մը հարյուր որինակ ավելի ծախելու համար չըսի, թե նույն որն սաստիկ հով մը կար, թե տեղատարափ անձրև կուգար, թե խուռն բազմություն մը հետաքրքրությամբ դեպի Ղալաթիո հրապարակը կվազեր, թե վոստիկանությունն աղջիկ մը ձերբակալած էր և այլն խոսքեր, վորովք վիպասաններն կսկսին միշտ իրենց վեպերը: Յես ալ կընայի ըսել այս ամենը, բայց չըսի, վորովհետև նույն որն վոչ հով կար, վոչ անձրև, վոչ խուռն բազմություն և վոչ ալ ձերբակալված աղջիկ մը:

Այս ճամբորդն ոժտված էր զույգ մը խոշոր և սև աչերով, զույգ մը հաստ, սև և յերկար հոնքերով, զույգ

մը մեծ ականջներով և զույգ մը քիթեր... Հե, Հե, մեկ քիթով, թեպետև զույգ մը քիթերու տեղ կընար ծառայել. անոր մեծությունը սխալեցուց զիս: Ուներ այնպիսի նայվածք մը, վորուն յեթե թատրոնի վարիչ հանդիպեր, իր աչերով կըհարցուներ այդ մարդուն. «Ի՞նչ ամսական կու գես թատրոնիս մեջ ապուշի դեր կատարելու համար»:

Մստուկներն և անկողինը նավակեն հանելուն պես ճամբորդը քաշեց քսակն և նավավարին իրավունքը վճարելով բեռնակիր մը կանչեց: Հինգ բեռնակիրներ ներկայացան իրեն: Տարակույս չկա, վոր յեթե հինգ կանչեր, քսանեհինգ պիտի ունենար իր առջև, մայրաքաղաքիս սովորության համեմատ:

— Վո՞ր կողմ պիտի յերթաք, աղա,—հարցուց բեռնակիրներեն մին, մեկ վոտը սնտուկներեն միույն վրա կոխելով:

— Բերա, Ծաղկի փողոց, թիվ 2 պիտի յերթամ,—պատասխանեց խոշոր մարդը:

— Շատ աղեկ, հասկցա. Բերա, Ծաղկի փողոց... պատվական փողոց մ'ե,—ըսավ հարցումն ընող բեռնակիրը և սնտուկ մը շալկելով սկսավ յերթալ:

— Ծաղկի փողոցն յես ալ գիտեմ,—ըսավ յերկրորդ բեռնակիրն և սնտուկին մեկն ալ ինք առնելուն պես Բերայի ճամբան բռնեց:

— Յես ամեն որ կերթամ Ծաղկի փողոցն,—ըսավ յերրորդն և մարդուն անկողինն գետնեն վերցնելն, կոնակին վրա առնելն ու վազելը մեկ ըրավ:

Այս գործողություններն այնքան արագ կատարվեցան, վոր մարդը չվարելով սկսավ չորս կողմը նայիլ, տեսնելու համար բեռնակիրներն, վոր բազմության մեջ անհայտ յեղած էյին:

— Ի՞նչ խայտառակություն է աս,—պոռաց վերջապես՝ վոտները գետինը զարնելով,—ո՞ւր տարին անկողինս

և անտուկներս. ատոնք ի՞նչ իրավունք ունին իմ անկող-
նուս և անտուկներուս խառնվելու. ի՞նչ աներես մարդ են
յեղեր այս տեղաց մարդերը. ինչ վոր կը տեսնեն, կառ-
նեն, կը տանեն:

— Ծաղկի փողոցը մենք ալ գիտենք, աղա, մեզի ալ
բան մը տուր, վոր տանենք,—ըսին մյուս յերկու բեռ-
նակիրները:

— Ծաղկի փողոցն ալ գետնին տակն անցնի, դուք
ալ,—պատասխանեց մարդն, վորուն այտերն նեղութենե
կարմրիլ սկսած էին:

Յերկու բեռնակիրները խնդալով հեռացան, և ճամ-
բորդն ալ իր անտուկներուն յետևեն յերթալու կը պատ-
րաստվեր, յերբ բարձրահասակ, թխադեմ, փոքր աչերով
մարդ մը, ուսերը տնկած, ձեռները շփելով և բռնազբոսիկ
ժպիտով մը մոտեցավ անոր և քաղաքավարական ձևով մը
ձեռները բռնելով՝ հարցուց.

— Դո՛ւք եք, Աբխողոմ աղա, յե՞րբ յեկաք, վո՞ր շո-
գենավով յեկաք, ի՞նչպէս եք, ձեր յեղբա՞յրն ինչպէս ե,
ազգային գործե՞րն ինչպէս են Տրապիզոն, հացին գինը
քանի՞ յե հոն, անձրև յեկա՞վ այս որերս ձեր քաղաքը...
վա՛յ, Աբխողոմ աղա, վա՛յ...

— Յես եմ Աբխողոմ աղա, հիմա յեկա, տաճկի շո-
գենավով յեկա, շատ աղեկ եմ, յեղբայրս ալ աղեկ ե, ազ-
գային գործերն ալ աղեկ են Տրապիզոն, հացին գինը մեկ
դահեկան ե. անձրև չեկավ այս որերս մեր քաղաքը,—
պատասխանեց փութով թիկնոցաբնակն, առանց ճանաչելու
այս անձն:

— Ներեցեք, թողություն ըրեք, վոր չկրցի մինչև
շոգենավ գալ զձեզ դիմավորելու համար: Ինձի գրված եր
Տրապիզոնեն, վոր այս շաբթու անպատճառ հոս պիտի
գաք...

— Յես ատանկ բաներու չեմ նայիր:

— Արդարեւ, մայրաքաղաքս ինքզինքը բախտավոր հա-
մարելու յե ձեզի պես պատվական ազգային մը, շնորհալի
յերիտասարդ մը, վողջամիտ մեկը...

— Մնտուկներս...

— Ազնիվ սիրտ մը, վեհանձն հոգի մը...

— Բեռնա...

— Հայրենասեր անձ մը...

— ...կիրները...

— Ազգասեր, ուսյալ, կըթյալ...

— Մնտուկ...

— Դաստիարակյալ...

— ...ներս առին տարին...

— Ազնվասիրտ, ազնվախոհ, ազնվադեմ մեկը իր մեջ
ունենալուն համար:

— Մնտուկներուս մեջ ատանկ բաներ չկան,—պա-
տասխանեց Աբխողոմ աղան՝ քայլել սկսելով բեռնակիր-
ները գտնելու համար:

— Թեպետև դուք զիս չեք ճանչնար, բայց յես ձեր
գերտաստանը խիստ լավ կճանչնամ. ձեր լուսահոգի հայրն
իմ լրագրույս բաժանորդ եր: Շատ բարի մարդ մ'եր,
աղքատներուն փողորմություն կուտար, աղքատ աղջիկներ
կը կարգեր և իրեն դիմողներուն փողորմություն կընէր:
Անանկ փողորմած մարդերը շատ ապրելու յեն. բայց ի՞նչ
ոգուտ. անգութ մահը միշտ բարինները կառնե և թող
կուտա չարերն, վոր ազգին չարություն ընեն: Թողունք
սակայն հինները և ուրիշ բանի վրա խոսինք: Շոգենավուն
մեջ հանգի՞ստ եյիք:

— Շատ հանգիստ եյի. պատվականապես կերա,
խմեցի և պառկեցա,—պատասխանեց Աբխողոմ աղան՝
քայլերն շուտ և մեծ առնել սկսելով:

— Յեթե հանգիստ չըլլայիք, վաղվան լրագրույս մեջ
պիտի գրեյի և ընկերության ուշադրությունը պիտի հրա-
վիրեյի,—ըսավ խմբագիրն յետևեն վաղելով:

— Շնորհակալ եմ:
 — Կաղաչեմ, ըսեք ինձի, քանի՞ տարեկան եք:
 — Քառասուն:
 — Վաճառական եք, կարծեմ:
 — Այո, յեթե անցագիր պիտի շինել տաք, հարկ չկա, վասնզի հատ մը ունիմ:
 — Ձե, վաղվան թերթիս մեջ պիտի գրեմ, վոր առաջի որը Տրապիզոնեն մայրաքաղաքս յեկավ մեծապատիվ Աբիսողոմ աղա յերեւելի վաճառականն, վոր իր լեզվագիտությամբն և վաճառականական հմտությամբն ծանոթ ե մեր ազգայիններուն: Տաճկերեն գիտեք, կարծեմ:
 — Վո՛չ:
 — Ֆրանսերե՞ն:
 — Վո՛չ:
 — Անգղիերե՞ն:
 — Վո՛չ:
 — Գերմաներե՞ն:
 — Վո՛չ:
 — Վնաս չունի, յես լեզվագետ պիտի ըսեմ ձեզի համար և ձեր վրայոք գովեստով պիտի խոսիմ:
 — Ամեն Պոլիս յեկողներուն անունները ձեր թերթին մեջ կը գրե՞ք:
 — Գրեթե ամենն ալ, յեթե ձեզի պես պատվավոր ազգայիններ ըլլան:
 — Պոլիսեն գացողներն ա՞լ կը գրեք:
 — Գրեթե կը գրենք, յեթե պատվավոր ազգայիններ ըլլան:
 — Շատ լավ, իմ անունս ալ գրեցեք, յես ալ պատվավոր ազգային մ'եմ: Մեր քաղաքին մեջ արտերու, յեղներու, կովերու և ագարակներու տեր եմ... Ասոնք ալ գրե, — ըսավ այնպիսի դեմքով մը, վոր կը հայտներ, թե մեծ շահ մ'ունենր այս խոսքերուն հրատարակությանը մեջ:

— Հոգ մի ընեք, խղճի և արդարության պարտք մը կատարելու համար ասոնք ալ կը գրեմ:
 — Յերկու-յերեք հատ սպասավոր ալ ունիմ... անոնք ալ լրագրույդ մեկ կողմը կրնա՞ն անցունել:
 — Ինչո՞ւ չե:
 — Վոսկիյե ժամացույց և շղթա ալ ունիմ, բայց շոգենավուն մեջ չգողցնելուն համար վրաս չառի. անոնք ալ գրել պե՞տք ե, — հարցուց Աբիսողոմ աղան, վոր բոլորովին մոռցած եր անտուկները:
 — Ասոնք գրելու հարկ չկա:
 — Շատ լավ, բայց մյուս ըսածներս լրագրույդ մեջ ամենեն առաջ դիր, վոր ամենքը կարդան:
 — Այնպես ընելու միտք ունիմ:
 — Խոշոր գրերով գրե:
 — Հանգի՛ստ յեղեք, ամենեն խոշոր գրերով:
 — Միայն հարուստ մարդերուն գալն և յերթալն կը գրեք, այնպես չե՞:
 — Այո:
 — Յրթե աղքատ մարդերն ալ կը գրեք, չեմ ուզեր, վոր իմ անունս...
 — Բնավ յերբեք, ստակ չունեցողներուն անունները ընավ չենք գրեր, նույն իսկ յեթե հազար վոսկի ալ տված ըլլան դպրոցի մը շինության համար:
 — Ըսել ե, վոր դուք ամեն իրիկուն հոս կսպասեք Պոլիս յեկող կամ անկից մեկնող հարուստները տեսնելու և անոնց անունները հրատարակելու համար, վորպեսզի ժողովուրդն գիտնա, թե ո՞վ յեկած ե, և ո՞վ գացած... Տարակույս չկա, վոր վաղը իրիկուն իմ անունս պիտի կարդամ ձեր լրագրին մեջ:
 — Այո, ձեր հասցեն տվեք, վոր տեղական թղթատարով դրկեմ լրագիրը:
 — Բերա, Ծաղկի փողոց, թիվ 2:

— Շատ աղեկ, — ըսավ խմբագիրն և գրպանեն թուղթ մը հանելով՝ բաժանորդներուն ցուցակին մեջ անցուց Աբխաղոմ աղան։

— Վաղը առտու լուսը ճեղքված ղրկե, վոր կարդամ իմ անունս լրագրին մեջ։

— Իրիկվան դեմ կը ղրկեմ, վասնզի լրագիրս իրիկունները կտպի։

— Վորչափ ուրախ կըլլայի, յեթե ձեր վաղվան լրագիրն առտուն տպելիք... բայց փաստ չունի, իրիկվան թող ըլլա. բավական ե, վոր անունս խոշոր գրերով գրվի։

— Այդ մասին հանգիստ յեղեք. վաղը իրիկուն անպատճառ կը ղրկեմ լրագիրն ընկալագրով։

— Ընկալագրով... Տեղական թղթատարով պիտի ղրկելիք հապա՞... Ընկալագիրն ո՞վ ե, տունս գիտե՞...

— Ընկալագիրն թուղթ մ'ե, վորուն մեջ կգրեմ. «Ընկալ մեծապատիվ Աբխաղոմ աղայեն... լրագրո տարեկան բաժանորդագիրն մեկ ու կես վոսկի», և այդ թուղթը ձեզի կը հանձնեմ, վորով տարի մ'իրավունք կունենաք իմ լրագիրս ընդունելու։

— Տարի մը շարունակ պիտի գրե՞ք իմ անունս։

— Ձե, բայց դուք բաժանորդ պիտի ըլլաք իմ լրագրույս, մեկ ու կես վոսկի վճարելով ինձի։

— Մեկ ու կես վոսկի՞... շատ ե... յերեք քառորդ վոսկի չբավե՞ր։

— Խմբագիրները բաժանորդագրույն վրա սակարկություն չեն ընեն...

— Շատ լավ, ղրկեցեք ձեր լրագիրն և այն թուղթը, բան մը կընենք։

— Սակայն չը կարծեք, թե յես բաժանորդ գրելու նպատակով զձեզ տեսնելու յեկա. քով լիցի. այդ պատիկությունը չեմ ընդունիր. բարեկամական պարտք մը կատարելու համար յեկա զձեզ տեսնելու։

— Հայտնի՞ բան ե։

— Բնավ ձեր մտքեն չանցունեք, թե այս մարդը մեկ ու կես վոսկի փրցնելու համար զիս տեսնելու յեկավ։

— Ձեմ անցունեք։

— Վասնզի կան խել մը մուրացկան խմբագիրներ, վորոնք Պոլիս յեկողները կողոպտելու համար անոնց քովը կերթան և բաժանորդ կգրեն զանոնք. յես այդ բանը չեմ կարող ընել, վասնզի բնությանս մեջ չկա... յես իբրև պատվավոր մարդ կուզեմ ապրիլ։

— Հասկցա, իբրև պատվավոր մարդ կուզեք ապրիլ...

— Ինձ հետ ձեր այս ունեցած տեսակցությունն ալ ուրիշի մի՞ զրուցեք, վասնզի տեսակ մը բախտախնդիր, չվառական անձեր կան, վորք բանդագուշական կենսագրություններ կը գրեն և իմ անձնականությունս կը խրժեմեն։

— Կհասկնամ, անձնականությունդ կը խժեմեն։

— Որինակի համար, սա պարագային մեջ հանցանք մ'ունի՞մ յես. զձեզ գիմավորելու յեկա և խոստացա լրագրույս մեջ հրատարակել ձեր անունը. դուք ալ իբրև վողջամիտ ազգային մը բաժանորդ գրվեցաք. կաղաչեմ, ըսեք, ձեր կոկո՞րդը սխմեցի, վոր ինձ բաժանորդ գրվեք։

— Ամենևին։

— Ատրճանա՞կ ցցուցի։

— Բնավ յերբեք։

— Դանա՞կ քաշեցի։

— Վո՞չ. բայց ուրիշ տեղեր ատրճանակ կամ դանակ ցցունելով բաժանորդ կը գրեն։

— Ատ ըսել չեմ ուզեր. սա ըսել կուզեմ, վոր դուք ձեր հոժար կամքովը բաժանորդ գրվեցաք։

— Այո։

— Յեվ յես վեհանձնաբար վարվեցա այս պարագային մեջ։

— Տարակույս չկա:

— Չվարկեցա այն խմբագիրներու պես, վորք ոտա-
րականի մը Պոլիս գալն իմանալուն պես՝ վագելով անոր
տունը կերթան բաժանորդ գրելու համար:

— Այդ չվառականներն իրավունք չունին քու անձ-
նականությունդ խժեժելու... դու վստահ յեղիր ինձի...

— Շնորհակալ եմ ձեզմէ: Մնաք բարով, Աբխաղոմ
աղա, որ մը մեր խմբագրատունը հրամանեցք խահվե մը
խմելու:

— Շատ աղեկ, որ մը կուգամ: Վագվանին մեջ ան-
ցունելու չմոռնաք:

— Անհոգ յեղեք:

Աբխաղոմ աղան և խմբագիրն բաժնվեցան իրարմէ
Բերայի քառուղվուն առջև, ուր հասած էյին խոսելով:

Աբխաղոմ աղան առանձին մնալով՝ սկսավ ճամբան
շարունակել, ինքն իրեն հետեյալ խորհրդածություններն
ընելով.

«Յես ինքզինքս չեյի կարծեր այնչափ մեծ մարդ,
վորչափ վոր կը կարծե այս խմբագիրն. բայց հարկավ ան
ինձմէ աղեկ գիտե իմ վորչափ մեծ ըլլալս, վասնզի խմ-
բագիր մ'ե և ուսումնական ե... վաղը լրագրի մեջ իմ
անունս տեսնողները անշուշտ իրար պիտի անցնին և հե-
տաքրքրություն պիտի ունենան ինձի հետ տեսնվելու...
վաղը պետք է վոր կիրակի որվա հազուստներս հագնեմ
և վոսկիյե ժամացույցս ու շղթաս ալ դնեմ. սպասավոր-
ներս ալ հետս բերելու էյի, ո՞վ գիտեր...»

Ամեն մարդ պիտի իմանա վաղը, վոր մեծ մարդ մը
յեկած է Կ. Պոլիս, ազնվախոհ, ազնվասիրտ, լեզվագետ,
ուսումնական, դաստիարակյալ, կրթյալ և այլն մեկը, և
յուրաքանչյուր կնիկ պիտի ըսե յուր երկանը. «Մեր աղ-
ջիկը սա Աբխաղոմ աղային տանք»: Երիկն ալ պիտի պա-
տասխանե կնկանը. «Նայինք Աբխաղոմ աղան մեր աղջ-

կանը կառնե՞. անիկա հարուստ տեղե մը աղջիկ առնել
կուզե հարկավ»: Այս պատասխանին վրա երկան և կնկան
մեջ վեճ մը պիտի ծագի և իրարու գլուխ պիտի պատա-
ռեն. վորո՞ւ հոգ... Անուննիս լրագիրին մեջ անցնելն սա
ոգուտն պիտի ունենա, վոր յերկու որվան մեջ հարուստ
աղջիկ մը առնելով պիտի լմացունեմ ամուսնության գործն,
վորու համար միայն յեկած եմ հոս... Այս ամուս...

Աղյուս բեռցված եշերու կարավանեն եշ մը բաղխ-
վելով Աբխաղոմ աղային դեմ՝ ընդմիջեց գայն իր խոր-
հրդածություններու մեջ, ուր ընկղմված ըլլալով՝ ուշա-
դրություն չեր ըներ առջևեն յեկող եշերուն, վորովք լի
յե միշտ Բերայի մեծ փողոցը:

— Մեկդի կեցիր,—ըսավ իշավար պարսիկն Աբխա-
ղոմ աղային, արդարացնել ուզելով իր եշը:

— Ատ խոսքը առաջ ըսելու էյիր, վոր զգուշանայի,
—պատասխանեց Աբխաղոմ աղան և ճամբան շարունակեց:

ԱՌԻՍՈՂՈՄԸ ՅԵՎ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ.

Կես ժամ չանցած Աբխաղոմ աղային ներկայացավ
յերիտասարդ մը, վոր վաճառականի չեր նմաներ, սեղա-
նավորի (սառաֆ) ալ չեր նմաներ, արհեստավորի ալ չեր
նմաներ, գործավորի (բանվոր) ալ չեր նմաներ և վերջա-
պես անանկ բանի մը կնմաներ, վորուն նմանը չկա: Հա-
զիվ յերեսուներկու տարեկան կը թվեր: Կապույտ աչերով,
դեղին մազերով զարդարված ըլլալով՝ ուներ նաև յերկու
մատ մորուք, վոր մայրաքաղաքիս մեջ կամ սգո նշան է
և կամ չքավորության: Հազուստներն այնքան հին էյին,
վոր հնախույզներն զանոնք գնելու համար մեծաքանակ
գումար մը կտային: Սակայն յեթե հազուստի մասին
վանողական եր, դեմքի մասին քաջողական զորություն
ունեիր այս անձը:

— Ծառա յեմ մեծապատվությանդ, մեծապատիվ

տեր,—պոռաց յերիտասարդն սենյակեն ներս մտնելով և մոտենալով Աբիսողոմ աղային:

— Ի՞նչ կա, ի՞նչ կուզեք, — հարցուց Աբիսողոմ աղան վախենալով:

— Վսեմափայլ տեր, ձեր գալուստն լսելով՝ փութացի հոս գալ իմ խորին մեծարանացս հավաստին ձեր փութերուն տակը դնել:

— Վստքերո՞ւս տակը. շատ աղեկ, դիր,—ըսավ Աբիսողոմ աղան, վոր կը կարծեր, թե մուճակ (վոտնաման) բերած եր իրեն:

— Շնորհակալ եմ, բարձրապատիվ տեր,—ըսավ յերիտասարդը, գլուխը բացավ և սեղանին վրա յեկավ կանգնեցավ:

Աբիսողոմ աղան այս տեսարանին առջև բոլորովին շվարած՝ անհամբեր տեսնել կուզեր, թե ինչ պիտի ընե՞ր այս պարոնը սեղանին վրա:

Յերիտասարդը ծոցեն թուղթ մը հանեց և աչերն Աբիսողոմ աղային տնկելով՝ բոլոր ձայնովը պոռաց.

— Տյարք և տիկնայք...

Աբիսողոմ աղա այս ահարկու ձայնեն վախենալով՝ նստած տեղեն յերկու կանգուն վեր ցատկեց և չկրնալով ինքզինքը զսպել՝ պոռաց.

— Ո՞վ ե աս մարդը. հիմարանոցեն փախած խեղճ ե, թե հիմարանոց յերթալու հիմար:

— Հայ ազգն,—շարունակեց յերիտասարդը ձայնը քիչ մ'իջեցնելով,—այսօր այնպիսի հանգես կը կատարե, վոր մեր հայրենյաց ամենեն քաջ դյուցազնին նվիրված ե...

— Միտքդ ի՞նչ ե, յեղբայր...

— Կար ժամանակ մ'ուր խավարը լուսո դեմ կ'ըլկեր, տգիտությունը գիտության դեմ, անցյալն ապառնիին դեմ, հրամայականը սահմանականին դեմ, սուրը գրչի դեմ,

ատելությունը սիրո դեմ, կրակը ջուրին դեմ, միսը բանջարեղենին դեմ. իսկ հիմա անցան այն ժամանակները. անոնք անցյալ են, մենք ապառնի. անոնք խավար են, մենք լույս. անոնք տգետ են, մենք գիտուն. անոնք սուր են, մենք գրիչ. անոնք ատելություն են, մենք սեր. անոնք կրակ են, մենք ջուր. անոնք միս են, մենք բանջարեղեն. անոնք վարունգ են, մենք խնձոր. անոնք փուշ են, մենք վարդ. Անցան, անցան այն դարերը, ուր մարդկությունը տգիտության ուրորոցին մեջ մեյ մ'ասդին, մեյ մ'անդին կերթար կուգար...

— Միտքդ ի՞նչ ե, յեղբայրս, յես քեզի բան մը չըրի. ի՞նչ կուզես ինձմե. գնա քեզի բարկացնողին զրուցե այդ խոսքերը...

— Այո, մարդկությունը կ'արշարվեր, կ'նախատվեր անդուժ բռնավորներուն ձեռքեն և չեր գիտեր, վորո՞ւ յերթալ և վորո՞ւ բողոքել:

— Տեր վողորմյա... տեր վողորմյա,—ըսավ ինքն իրեն Աբիսողոմ աղա,—քաջելիք ունինք յեղեր... յես կըրնամ հիմա զինքը սեղանեն վար առնել, բայց կ'վախնամ, վոր ծոցեն ատրճանակ մը կ'հանե և կ'զարնե ինձի, վասն զի խիստ բարկությամբ կը խոսի:

— Իսկ յերբ գիտությունն յեկավ,—շարունակեց ատենաբանը,—և վանեց տգիտությունն, ինչպես լույսն՝ խավարը, սերն՝ ատելությունը, գրիչն՝ սուրը, ապագայն՝ անցյալը, այն ատեն, ահ այն ատեն, այո՛ այն ատեն, այո՛ կըսեմ, այն ատեն միայն հասկցվեցավ, վոր մարդկություն, ազգ և հայրենիք բառերը բառարանները լեցնելու համար շինված բառեր չեյին, այլ ամեն մարդու մտքին մեջ, սրտին մեջ, հոգույն մեջ յերկաթյա տառերով և անջինջ կերպով գրոշմելու բառեր եյին...

— Յեղբայր, կ'աղաչեմ, վար իջիր և այնպես զրուցե ցավդ...

Ատենաբանը կայնած տեղը այնպես կգողար, վոր Աբիսողոմ աղային սիրտը կհատներ՝ թե կազը (նավթի ճրագ) գետինը պիտի իյնար։ Ուստի չուզելով այլևս համբերել, պոռաց ինքնակոչ ատենաբանին յերեսն ի վեր.

— Վար իջիր սրկե։

— Կաղաչեմ, մի սաստեր գիս։

— Վար իջիր, ապա թե վոչ...

— Մի կոտրեր իմ սիրտս, վոր ազգին համար կբաբախե։

— Ինչ ըսելիք վոր ունիս, յեկուր քովս, մարդու պես նստե և ըսե. հոն տեղվանքը յեղնել ի՞նչ պիտի ըլլա։

— Կաղաչեմ, թող տուր վերջացնեմ. ա՛հ, չես գիտեր, թե վորչափ կը հուզվիմ, յերբ ճառ կարդամ։

— Վար իջիր։

Ատենաբանը բեմեն կիջնա և կերթա աթոռի վրա կնստի։

— Հիմա զրուցե ինձի, միտքդ ի՞նչ ե, — կըսե Աբիսողոմ աղան բարկությամբ։

— Կաղաչեմ, մի բարկանար։

— Ի՞նչ կուզես, զրուցե, շո՛ւտ, հիմա։

— Բարկությամբ մի վարվիր հետս, վոտքդ պազնեմ, սիրտս լեցված ե, հիմա կսկսիմ լալ։

Յե՛վ ատենաբանը կսկսի լալ։

— Լալու ի՞նչ կա, յեղբայրս։

— Ծառագ կիսափաղի գրականությամբ ազգին ծառայել, բայց այս ազգը շատ ապերախությամբ կվարվի իր գրագետներուն հետ։

— Ատոր մեջ յես ի՞նչ հանցանք ունիմ։

— Դուք հանցանք չունիք և թերևս իրավունք ունիք... վոտանավորներ ունիմ գրած հայրենիքի վրա, սքանչելի կտորներ, պատվական տողեր, վորոնց մեջ յերևակայությունը, ավյունը, խանդը, հուրն ու բոցը սավառնաթև կսլանան։

— Շատ աղեկ, ատոր համար լալո՞ւ յե։

— Մեր ազգն անոնց հարգն ու պատիվը չճանչնար, տղայական բաներ կը կարծե և թող կուտա, վոր զանոնք գրողը անոթի մնա։

— Յէ՛ս ինչ ընեմ։

— Կաղաչեմ, քաղցրությամբ վարվե հետս։

— Ի՞նչ ըրած ունիմ քեզի։

— Ձեզի պիտի աղաչեյի, վոր...

— Ի՞նչ, շո՛ւտ ըսե...

— Մի պոռար յերեսս ի վար, հոգիդ սիրես. հիմա կսկսիմ լալ... խնդիրս սա յեր, վոր կուզեյի տպել տալ քիչ մը առաջ կարդացած ճառս...

— Գնա տպել տուր. քու ձեռքդ բռնող կա՞։

— Պիտի խնդրեյի ձեր մեծապատվութենեն, վոր տպագրության ստակը դուք տայիք։

— Ինչո՞ւ... ի՞նչ պատճառ կա, վոր քու ճառիդ համար յես դրամ տամ։ Լավա՞ծ բան ե, վոր մեկը իրեն շահու համար գի՛րք տպե, և ծախքն Աբիսողոմը տա...

— Կխնդրեմ, սիրտս արդեն խոցված ե, դուք ալ նոր վերք մը մի բանաք հոն։

— Ինչո՞ւ վերք պիտի բանամ յեղեր. գնա բանդդ, յեղբայր, փորձանք յեղար գլխուս։

— Գիտե՞ք վորքան ծանր ե գրագետի մը ասանկ խոսքեր լսելը...

— Ձեմ գիտեր և գիտնալ ալ չեմ ուզեր։

— Բանաստեղծի մը սիրտը շատ փափուկ ե. ամենաթեթև խոսքե մը կվիրավորվի։ Այս նյութին վրա վոտանավոր մը գրած ունիմ, կարդամ, մտիկ ըրեք։

— Վոտանավոր մտիկ ընելու ժամանակ չունիմ։

— Կաղաչեմ, վոտանավորիս հետ խստությամբ մի վարվիք. այն վոտանավորին համար, դուր դուք չեք ուզեր մտիկ ընել, յերկու ամիս աշխատած եմ յես, և յերբ վոր

անոր նախատվիլը տեսնեմ, արժանապատուությունս կը վիրավորվի: Կաղաչեմ, վոտանավորիս համար գեշ մի գրուցեք... Խնդրեմ թույլ տվեք ինձ կարդալ զայն անգամ մը...

— Յես վոտանավոր մտիկ ընելու չեկա հոս:

— Շատ լավ. վողբերգություն մը գրած եմ. անոր վրայեն անցնինք:

— Ձեմ ուզեր, յես անոթի յեմ, հիմա կերակուր պիտի ուտեմ:

— Շատ լավ, ուտելիքի վրա ատենաբանություն մ'ընեմ:

— Ժամանակ չունիմ մտիկ ընելու:

— Կաղաչեմ, այդ խոսքը ուրիշ անգամ մի ըսեր. ատիկե ավելի ծանր խոսք չկա հեղինակի մը համար, վոր իր մեկ աշխատասիրությունն ուրիշի կարդալու փափագ կհայտնե: Կխնդրեմ, բարձրապատիվ տեր, քաղցրությամբ վարվեցեք հեղինակներու հետ:

— Գլխուս վրա՞ նստեցունեմ քեզի:

— Վոտքդ պագնեմ, մի ծաղրեք զիս. ինչո՞ւ ձեր գըլխուն վրա նստեցունեք:

— Ի՞նչ ընեմ հապա, քսակս քեզի՞ տամ հեղինակներու հետ քաղցրությամբ վարված ըլլալու համար:

— Վո՛չ, միայն ճառիս տպագրության ծախքը:

— Քանի՞ վոսկիով կլմնա գործդ:

— Չորս վոսկիով կլմնա. բան մը չե. իմ մեկենասս պիտի ըլլաս, յես ալ քու անունդ վոտանավորով մը գըրքույկին ճակատը պիտի դնեմ:

— Ծակա՞տը դնես պիտի:

— Այո:

— Ինչո՞ւ համար:

— Վորպեսզի ամեն մարդ գիտնա, թե ձեր ստակովը տպված ե այն գիրքը:

— Շատ լավ, — պատասխանեց Աբիսողոմ աղան և

քսակեն չորս վոսկի հանեց, տվավ: Հեղինակն հազար հարգանք մատուցանելով՝ դուրս յելավ:

Աբիսողոմ աղան յետեվեն կանչեց զինքը և հարցուց.

— Ձկընա՞ր ըլլալ, վոր գըրքին ճակատը սպասավորներուս ալ անունները դնես և իմացունես ազգին, վոր Աբիսողոմ աղան կովեր, վոչխարներ, եշեր և ագարակներ ունի իր քաղաքին մեջ:

— Ատ ձեր ըսածները հովերգության ճյուղին կվերաբերին:

— Ձեմ հասկնար:

— Ատոնց վրա վոտանավորներ կգրվի. յեթե կփափագիք, վոտանավոր մը շինեմ:

— Ի՞նչ ընեմ վոտանավորը:

— Լրագրի մը մեջ տպել կուտաք:

— Կտպե՞ն:

Ինչո՞ւ չպիտի տպեն, յեթե կես վոսկի տալու ըլլաք, քառասուն անգամ կտպեն:

— Շատ աղեկ, ատ ըսածդ գրե:

— Գլխուս վրա:

— Բայց աղվոր բան մը ըլլա:

— Շատ լավ:

— Այնպես վոր տեսնողը հավնի:

— Հարկավ:

— Վաղը առտու կբերե՞ք:

— Վաղը առտու... Ի՞նչ կըսեք... մեկ ամիսեն հազիվ կընամ պատրաստել:

— Մեկ ամիսե՞ն:

— Հազիվ. վոտանավոր կարդալը դյուրին ե, բայց գրելը դժվար: Գեղեցիկ վոտանավորի մը համար քիչեն քիչ յերկու ամիս պետք ե:

— Ի՞նչ կըսեք...

Այո, բայց յես կաշխատիմ ամիսե մը լմնցունել:

— Ատ ի՞նչ դժվար բան ե յեղեր:

— Ի՞նչ կարծեցիք հապա, յերկու ամիս պիտի սպասեմ, վոր մուսաբ գա և ներշնչե ինձի, վորպեսզի գրեմ. առանց մուսայի վոտանավոր չգրվիր:

— Յեթե այդ մուսայն գալու չըլլա՞...

— Անպատճառ կուգա:

— Չկրնա՞ր ըլլալ, վոր նամակ մը գրես և աղաչես իրեն, վոր շուտ գա և դուն ալ յերկու ամիս չսպասես:

— Անիկա ինքն իրեն կուգա, նամակի պետք չունի, մեծապատիվ տեր:

— Ո՞ւր կ'նստի, շա՞տ հեռուն ե:

— Այո, շատ հեռու յե, բայց կուգա:

— Յամաքե՞ն, թե ծովեն:

— Չե, մեծապատիվ տեր, չե:

— Ո՞վ ե ուրեմն ատ գետնին տակը անցնելու մարդը... ուսկի՞ց պիտի գա... ըսե, վոր ճամբա մը մտածանք ու բերել տանք... Յեթե մեկ—յերկու վոսկի տանք, այս շաբաթ կուգա՞:

— Այո, յերկու վոսկի տալուդ պես գործը կդյուրանա և մուսայս այս շաբաթ վազելով կուգա,—պատասխանեց անմուսա բանաստեղծը վոսկի բառը լսելուն պես:

— Դրե ուրեմն իրեն, իմ կողմես ալ հատուկ բարևներ ըրե և ըսե, վոր Աբխոզում աղան քեզ տեսնել կուգե:

— Գլխուս վրա: Մնաք բարյավ, տեր, շնորհակալ եմ ձեզմե. ծառա յեմ ձեր մեծապատվության և կաղաչեմ վոր ընդունիք...

— Վո՛չ, ըսավ Աբխոզում աղան բարկությամբ.—ալ յերկար ըրիր. անա ի՞նչ վոր ըսիր, ընդունեցի և դեռ ի՞նչ կուգես, վոր ընդունիմ...

— Խորին հարգանացս հավաստիքը, տեր... վորով մնամ ձեր մեծապատվության ամենախոնարհ ծառա:

— Շատ աղեկ:

Մեկնեցավ բանաստեղծն, յերկու վոսկով բերել տալ խոստանալով մուսայն, զոր վոմանք ավելի աժան գնով բերել կուտան: Մուսայի մ'որականն հյուսնի մ'որականն ավելի չե այժմ:

ԱՌԻՍՈՂՈՄԸ ՅԵՎ ԼՈՒՍԱՆԱՐԻՉԸ.

— Բարե, վսեմափայլ տեր,—ըսավ յերեսնամյա և վառվուռն յերիտասարդ մը սենյակ մտնելով և արագաքայլ Աբխոզում աղային վազելով՝ անոր ձեռները սղմելու համար:

Աբխոզում աղան տեղեն յելավ և ձեռները հանձնեց այդ յերիտասարդին, վոր ուղածին պես սղմե և թոթվե զանոնք՝ հազար ու մեկ հարգանքներ մատուցանելով:

— Նստեցեք Աբխոզում աղա, կաղաչեմ, չվայլեր, վոր վոտք յե՛նեք,—ըսավ յերիտասարդն՝ տիրոջը դարձնելով իրեն հանձնված ձեռներն և կոտրավելով հետ-հետ գնաց, թիկնաթուռի մը վրա նստավ:

Աբխոզում աղան բազմոցին վրա բազմեցավ:

— Արդարե, մեր պարտքն եր յերեկ գալ և ձեր գալուստը շնորհավորել, բայց ուշ իմացանք ձեր գալն. ասոր համար հատկապես ձեր ներողությունը կխնդրենք,—ըսավ յերիտասարդը՝ ձեռներն իրար շփելով:

— Այսոր գալով պակասություն մ'ըրած չեք ըլլար, վոր ներողություն խնդրեք:

— Ձեր քաղաքավարությունն ե, վոր այնպես խոսել կուտա ձեզի, բայց մեր պակասությունը միշտ կձանձնանք: Արդարե, մեծ պակասություն մ'ե մեր ըրածը. ձեզ պես յերեկի մարդ մը մայրաքաղաքս գա և պատկերահան մը անմիջապես քառի յեկառի չերթա, պակասություններու պակասությունն ե, վոր և վո՛չ մեկ կերպով մը կրնա պակասություն ըլլալե գաղարիլ:

— Ամենևին պակասություն մը չե, յեթե բնավ չը-

գայիք, դարձյալ պակասություն մը չե՞ր համարվեր ինձի համար:

— Շատ վեհանձն եք:

— Ամենևին վեհանձն չեմ:

Թող այնպես ըլլա. ասոր համար հիմա վիճաբանության մտնելու հարկ չեմ տեսներ. միայն ինքզինքս ձեռնադրության տակ կրնեմ և ձեր հրամաններուն կըստնալով. յեթե կուզեք, հոս քաշել տվեք, յեթե կփափագիք մեր գրասենյակը պատվել, հաճեցեք հոն հանեմք...

— Ի՞նչ պիտի քաշել տանք... իմ ակռաներս աղեկ են:

— Գիտեմ, վոր ակռաներդ աղեկ են, ինչպես նաև դուք ալ աղեկ եք, յես կփափագիմ ձեր լուսանկար պատկերը քաշել:

— Յես մինչև հիմա պատկերս բնավ քաշել տված չունիմ և քաշել տալու հարկ մ'ալ չեմ տեսներ, վասն զի ամեն ուր հայելի կ'նայիմ և ինքզինքս կ'տեսնեմ:

— Յեթե ձեր պատկերը մեկու մը ղրկել ուզեք, հայելին կրնա՞ք ղրկել, Աբխազում աղա:

— Հայելին ինչո՞ւ ղրկեմ, յես կերթամ:

— Շատ աղեկ կը խոսիք, բայց յես մինչև վոր ձեր պատկերը չհանեմ, չեմ կրնար հանգիստ ըլլալ. ինձի համար պատկերություն մ'ե ձեր պատկերը չհանելը, թող վոր ձեզի համար ալ այնպես ե:

— Ինչո՞ւ:

— Լավա՞ծ բան ե, վոր ձեզի պես յերեւելի մարդ մը Պոլիս գա և պատկերը քաշել չտա, աշխարհ արարած ձեզ վրա պիտի խնդացնեք:

— Ինչո՞ւ:

— Պատճառն հայտնի յե. մեծ մարդերը բնականաբար մեծ բարեկամներ կ'ունենան. դուք մեծ մարդ մ'եք և այսոր կամ վաղը պիտի սկսեք մեծ մարդերու այցելություններն ընդունիլ: Անոնցմե շատերն իրենց պատ-

կերներեն մեյմեկ հատ պիտի նվիրեն ձեզի, և դուք ալ պիտի ստիպվիք ձերինեն մեյմեկ հատ տալ անոնց:

— Յե՛վ յեթե չտամ, կխնդա՞ն իմ վրա:

— Խնդալն ալ խոսք ե. ընկերություններու մեջ մատի վրա կ'առնեն քեզի:

— Չարմանալի բան...

— Լաված բան ե, վոր ձեզի պես ազնվական մը պատկերը հանել չտա. մեծ ամոթ ե...

— Մեծ ամոթ...

— Այո, շատ մեծ ամոթ ե, անվարտիք պատիւն այնքան ամոթ չե, վորքան իրեն պատկերն չ'ունենալը:

— Յես չեյի գիտեր:

— Բաղաքակրթությունը և լուսավորությունը պարտք կրնեն մեր ամենուս վրա, վոր մեր պատկերներն ունենանք:

— Լրագիրները պիտի գրե՞ն, վոր Աբխազում աղան իր պատկերը քաշել տված ե:

— Լրագիրներու վերաբերյալ խնդիր մը չե աս...

— Ըսել ե, թե յեկեղեցիներու մեջ ծանուցում ա՞լ չ'պիտի ըլլա:

— Ծանուցումի ի՞նչ հարկ կա, Աբխազում աղա:

— Անանկ ե նե՛ միտք չ'ունիմ պատկերս քաշել տալու, վասնզի անողուտ բան մը կերեալ ինձի:

— Ի՞նչ կըսեք, ասկից ավելի ոգտակար ի՞նչ կա. յեթե ձեր բարեկամներեն մեկուն այցելություն մը տալ ուզեք և ժամանակ չ'ունենաք, ձեր մեկ պատկերը կղրկեք — կլմնա, կերթա: Յեթե կարգված եք, ձեր ամուսնույն կղրկեք, վոր ձեր բացակայությանն ատեն անոր վրա նայելով կարողը կ'առնե. յեթե ամուսնացած չեք, շատ աղջիկներ ձեր պատկերը կ'տեսնեն և ձեր ով ըլլալը կ'հասկնան, վորով ընկերություններու մեջ ձեր անունը կ'ստովի: Լուսանկար պատկեր մը այս որվան որս հացեն ավելի

պետք ե մարդուս. կաղաչեմ, վոր համոզվիք և ժամ առաջ
յերթանք ձեր պատկերը քաշենք:

— Աղջիկներն ինչպես և ուր պիտի տեսնեն իմ
պատկերս...

— Չե՞ վոր ձեր բարեկամներուն պիտի տաք, անոնք
ալ իրենց տունը պատկերներու հատուկ գիրքի մը մեջ
պիտի անցունեն և ամենուն պիտի ցուցնեն:

— Յուցնելով ինչ պիտի ըլլա:

— Ինչ կուզեք վոր ըլլա... միշտ կհիշվիք...

— Յեթե չհիշվիմ ինչ կկորսնցնեմ. հոգս եր իմին,
թե զիս պիտի հիշեն. կուզեն հիշեն, կուզեն չհիշեն. յես
անանկ դատարկ բաներու ստակ չեմ տար...

Մանուկ աղան*) Աբխսողոմ աղային նախաճաշը կբերե
և յեռոտանի սեղանին վրա դնելե վերջը՝ կհարցունե:

— Ինչ վորոշեցիք, նայինք, Աբխսողոմ աղային պատ-
կերը կես մեջքէն պիտի քաշեք, թե վոտքի վրա:

— Վոչ կես մեջքէն, վոչ ալ վոտքի վրա, — կպատաս-
խանե Աբխսողոմ աղան:

— Աթոռի մը վրա նստած ամբողջ պիտի քաշեք:

— Վոչ:

— Պառկած պիտի հանեք:

— Վոչ:

— Քովընտի:

— Վոչ:

— Ինչպէս վորոշեցիք ուրեմն:

— Վորոշեցինք, վոր մեր պատկերը բնավ քաշել
չտանք:

— Ատ չըլլար. ասիկա մեծ պզտիկություն ե, Աբխ-

*) Մանուկ աղան սրճարաններում քաշյեկող պարապորդ-
ներէից ե, վոր զբաղված ե շարունակ թաղական ընտրություն-
ների մասին խոսելով և քվե (ձայնը) ծախելով: Նրա տանն ե
խշկանել Աբխսողոմը:

սողոմ աղա. հիմա պզտիկներեն բռնե մինչև մեծերը գնա,
— ամենն ալ տարին քանի մ'անգամ պատկերնին քաշել
կուտան. յերկու ամսու տղաներն անգամ իրենցն ունեն.
միայն իրենց մորը արգանդին մեջ գտնվողները չունին
իրենց պատկերը. յեթե ատոր ալ դյուրին մեկ ձամբան
գտնեն, անոնցն ալ պիտի հանեն:

— Յես չկրցի համոզել Աբխսողոմ աղան, վոր կար-
ծեց, թե զինքը խաբելու համար յեկած եմ հոս, — ըսավ
պատկերահանը:

— Չե՛, չե՛, մեր պատկերահանն անանկ մարդ չե,
— ավելցուց Մանուկ աղան:

— Ըսի թե Աբխսողոմ աղային պես մեծ և յերեւելի
մարդ մ'իրեն պատկերն անպատճառ ունենալու յե:

— Այո՛, ունենալու յե, և քանի մը տեսակ: Որինակի
համար. տասներկու հատ պզտիկ, տասներկու հատ միջին,
տասներկու հատ մեծ. տասներկու հատ վոտքի վրա,
տասներկու հատ աթոռի մը վրա բազմած, տասներկու
հատ քովտի նստած, տասներկու հատ շիտակ նստած,
տասներկու հատ վոտք վոտքի վրա դրած, տասներկու հատ
ձեռք ձեռքի, տասներկու հատ գլուխը ձեռքին կռթնած,
տասներկու հատ ձեռքը սեղանի մը վրա դրած. տասներկու
հատ պառկած, տասներկու հատ ձեռքը գավազան բռնած.
տասներկու հատ խնդումբեւ, տասներկու հատ տխուր
դեմքով, տասներկու հատ ալ վոչ խնդումբեւ և վոչ
տխուր դեմքով: Այո՛, Աբխսողոմ աղա, աս ըսածներես հատ
մը յեթե պակաս ըլլա, ձեր պատվուն վնաս կուգա:

— Իրա՞վ կըսեք, — հարցուց Աբխսողոմ աղա:

— Սուտ խոսելու բնավ պարտականություն չունիմ.
յեթե ասոնք չունենաս, քու վրադ աղեկ աչքով չեն նա-
յիր. բոլոր մեծ մարդերն ասոնք ունին:

— Մեծ մարդերն ունի՞ն, աղե՞կ գիտես:

— Այո՛, ունին:

— Պզտիկներն ալ ունին ըսիր հապա՞:

— Պզտիկներն այսչափ չունին. անոնք կամ յերեք հատ և կամ շատ-շատ՝ վեց հատ հանել կուտան:

— Բնավ մտքես չեր անցներ, վոր պատկերին այսչափ կարևորություն կտրվի հոս:

— Այո, կարևորությունը հիմա միայն պատկերներուն կտրվի. վորքան աղեկ քաշված ըլլան, այնքան ավելի կարևորություն կառնեն:

— Քանի վոր ամեն մարդ իր պատկերն ունի, իմ մեծ մարդ ըլլալս ինչէ՞ն պիտի հասկցվի, միայն մեծ մարդերը քաշել տալու եյին, վոր այն ատեն...

— Բայց մեծ մարդերունը ուրիշ տեսակ է—խոշոր դիրքով և փայլուն թուղթի վրա կհանեն:

— Չկրնա՞ր ըլլալ, վոր սպասավորներս ալ առջևս բարե բռնած հանենք:

— Շատ աղեկ կըլլա:

— Իրա՞վ կըսեք:

— Այո:

— Որինակի համար յես ագարակներ ալ ունիմ, վորոնց մեջ շատ մը կովեր, վոչխարներ, ձիեր, սագեր, բադեր կան, անոնք ալ կարելի չէ՝ պատկերին մեկ կողմը դնել:

— Ասոնք կարելի չէ, բայց սպասավորներդ կընաս առնել...

— Չկրնա՞ր ըլլալ վոր,—հարցուց. նորեն Աբիսողոմ աղան,—պատկերին տակը գրվի, վոր այս մարդը ագարակներ, ձիեր, կովեր, եղեր ունի:

— Ատ չգրվիր. կընա գրվի, բայց մինչև այսօր սովորություն յեղած չէ: Սակայն ի՞նչ հարկ կա զանոնք գրելու. արդեն ամեն մարդ շուտով կիմանա:

— Ձիու վրա նստած կընա՞նք հանել:

— Այո,—սպասախանեց պատկերահանը:

— Ձին վազցունելով:

— Ատ դժվար է:

— Շատ լավ, վաղը կնայինք:

— Յեթե կուզեք, մեքենան հոս բերեմ վաղը:

— Այո, այո, հոս բերեք,—կըկնեց Մանուկ աղան.

—վասն զի չվայելեր, վոր Աբիսողոմ աղան ձեր սենյակը գա: Մեծ մարդերը միշտ իրենց տուններուն մեջ քաշել կուտան պատկերներն:

— Գլխուս վրա, ըսավ պատկերահանը և ձեռները շփել սկսելով վորքի վրա յելավ և կոտրովիլ սկսավ այնպես, վոր խոսք մ'ըսել կուզեր և կքաշվեր:

— Վաղը մեքենան հոս բեր,—ըսավ Աբիսողոմ աղան:

— Շատ լավ,—պատասխանեց պատկերահանը՝ միշտ կոտրովիլով և ձեռները շփելով:

— Վաղը մեքենան հոս բեր ըսինք ա, —կըկնեց Աբիսողոմ աղան, տեսնելով վոր պատկերահանը չերթար:

— Այո, հասկցա. մեքենան վաղը հոս պիտի բերենք,—սպասախանեց նորեն պատկերահանը.—բայց սովորություն մ'ունինք մենք, վոր... ներեցեք սակայն:

— Ըսեք:

— Բայց կաղաչեմ, ծանր չգա ձեզի:

— Ծանր չգար ինձի:

— Սովորություն մ'ունինք, վոր յեթե մեքենան մեկու մը տունը տանիլ հարկ ըլլա, կանխիկ գումար մը կառնենք... վոչ թե վստահություն չունենալնուս համար, այլ սովորություն մը հարգելու համար:

— Ատ ի՞նչ գեշ սովորություն մ'է:

— Վերջապես սովորություն մ'է:

— Շատ լավ... յերկու վոսկի կբավէ:

— Այո, կբավէ:

Աբիսողոմ աղան յերկու վոսկի տվավ պատկերահանին, վոր դուռը բանալն և աներևութանալն մեկ շրավ:

— Արիսողոմ աղա հրամանքնի՞դ եք,—հարցուց ներս մտնելով մաքուր հագված յերիտասարդ մը՝ բազմոցին վրա նստելեն յետքը:

— Այո՛, յես եմ:

— Շնորհակալ եմ, վոր Արիսողոմ աղան դուք եք. ձեր գալուստը լրագրի մեջ կարդացի և շատ ուրախացա, վոր ազգերնուս մեջ ձեզի պես ազնիվ սիրտ կրող ազգասերներ պակաս չեն. վասնզի այն ազգն, վոր ազգասեր չունի իր մեջ, ազգ չէ:

— Այո՛:

Փոխադարձաբար այն ազգասերն ալ, վոր ազգ չունի, ազգասեր չէ:

— Շիտա՛կ ե:

— Ազգ մը, վոր իր աշխատավորները չքաջալերեր,— ավելցուց յերիտասարդն միշտ ծանր և լրջագույն յեղանակով մը,— ազգերու կարգ անցնելու բնավ իրավունք չունի:

— Շատ աղեկ կխոսիք:

— Յեվ յերբ աշխատավոր մը վարձքը չընդունիր իր ազգեն, բնականաբար կվհատի և յերբեմն կխորհի յերթալինքդինք ծովը նետել:

— Ատ տղայություն ե:

— Ներեցեք, Արիսողոմ աղա, յեթե մեր այս առաջին տեսությանը քիչ մը համարձակ կխոսիմ ձեզի հետ:

— Հոգ չէ:

— Ծառադ վեց տարի Յեվրոպա մնացած եմ և բժշկություն սովորած եմ:

— Աղեկ արվեստ:

— Գիշերները քունս ծախելով՝ կարդացած ու գրած եմ, վորպեսզի քաղաքս դառնամ և ազգիս ծառայությունը ընեմ:

— Մարդ ալ իր ազգին ծառայությունը ընելու յէ:

— Յերկու տարի յէ, վոր հոս կը գտնվիմ և մինչև այսոր հազիվ չորս հիվանդ նայած եմ, հասկցիր, թե ի՞նչպես կքաջալերվին հոս բժիշկները:

— Յավալի՛ բան... այս տեղացիները հիվանդ ըլլալու սովորություն չունին...

— Ունին, բայց հոս հիվանդները ազգային զգացում չունին, Հայաստանի վրա գաղափար չունին:

— Ի՞նչ կըսեք:

— Այո՛, յերբ հայ մը հիվանդ ըլլա, ոտար ազգե բժիշկ մը կբերե իր տունը՝ առանց գիտնալու, թե հայու ցափն հայը միայն կարող ե բժշկել, առանց համոզվելու, թե ոտարը չի կարող հայու ցավուն դարման ըլլալ: Այսօրվան որս յերկու հազարեն ավելի հայ բժիշկ կա. ասոնց միջև հինգ-վեց հատը, մանավանդ յերկու—յերեք հատը, պատվական կյանք կանցունեն, և անդին մնացածը ամեն որ բերանը բաց կսպասե, վոր հիվանդ մը ներկայանա իրեն և ստակ առնե:

— Գեշ վիճակ:

— Ի՞նչ ընեն ազգային բժիշկներն, յերբ ազգային հիանդներն ոտարներու կղիմեն... ո՛հ, ոտարասիրություն, ոտարասիրություն,—գոչեց բժիշկն՝ աչերն յերկինք վերցնելով. յե՛րբ պիտի յերթաս մեր քովեն:

— Ոտարասիրությունը աղեկ բան չէ:

— Մանավանդ թե բժիշկները քաջալերելու չափ հիվանդություն ալ չկա մեր ազգին մեջ. և այն ազգին մեջ, վոր հիվանդությունը տարածված չէ, պարապ բան ե Յեվրոպայի բժիշկներուն չափ ճարտար բժիշկներ հուսալու, ինչպես նաև այն ազգն, վորու մեջ ընթերցասիրությունն տարածված չէ, իրավունք չունի տաղանդավոր և հանճարեղ հեղինակներ ունենալու. տաղանդն և հանճարն առանց քաջալերության կմեռնին:

— Շատ իրավունք ունիք:

— Ձեք կարող յերևակայել, Աբիսողոմ աղա, թե վո՛ր-
չափ հուսահատած եմ. հազար անգամ զղջացած եմ, յեր-
կու հազար անգամ անեծք կարդացած եմ բժիշկ ըլլալուս
համար. ուր եր, թե բժիշկ ըլլալու տեղ հիվանդ ըլլայի
և մեռնելի: Մեր ազգին մեջ հիվանդութիւնը բժշկութե-
նէն աղեկ է, վասնզի տգիտութիւնն գիտութենէն ավելի
կըաջալերվի... թեթևութիւնը ծանրութենէն ավելի հարգ
կգտնե, մոլիններն առաքինիներէն ավելի պատիվ կվայե-
լեն: Ճշմարիտ, ուխտ ըրած եմ, վոր յեթե որ մը յերևելի
ազգայիններէն հիվանդ մը նայիմ, անոր անունը լրագիր-
ներու մեջ բարձրացունեմ:

Այս խոսքին վրա Աբիսողոմ աղան արթնցավ, այս-
ինքն «փառասիրութիւնն արթնցավ... ուստի անմիջա-
պէս տկարութիւն ունենալ ուզեց:

Աղեկ եղավ վոր,— ըսավ բժշկին,— այսոր հոս յեկաք,
վասնզի քանի մ'որե ի վեր վրաս գեշութիւն մը կա:

— Ի՞նչ կզգաք,— հարցուց բժիշկը:

— Դեշութիւն մը կզգամ:

— Վո՞ր կողմը:

— Վո՞ր կողմս:

— Այո՛:

— Ամեն կողմս:

— Ախորժակդ ի՞նչպէս է:

— Աղեկ է:

— Կերածդ շուտ մը կմարսե՞ս:

— Կմարսեմ:

Դիշերները հանգիստ կընանա՞ս:

— Շատ հանգիստ, բայց վրաս գեշութիւն մը կզգամ:

— Գլուխդ յերբեմն կցավի՞:

— Այո՛:

— Վրադ սանկ թուլութեան պէս բան մը...

— Ճիշտ:

— Յերբեմն դողալ մը սանկ...

— Այո՛, այո, դողալ մը սանկ (մեկուսի) կյանքիս
մեջ դողացած չունիմ:

— Դողալէն վերջը տաքութիւն մը...

— Տաքութիւն մը:

— Տաքութենէն վերջը քրտինք մը...

— Քրտինք մը:

— Առտունները լեզվիդ վրա լեղիութիւն մը...

— Այո՛, լեզվիս վրա լեղիութիւն մը:

— Հասկցա, բան մը չե, կանցնի, ինքզինքդ մրսե-
ցուցած ես:

— Ինձ ալ այնպէս կուգա, վոր ինքզինքս մրսեցու-
ցած եմ:

— Շատ բժիշկներ կան, վոր այս հիվանդութիւնը
չեն հասկնար, սխալ դեղեր կուտան, ուրիշ հիվանդու-
թիւն կհրավիրեն:

— Ուրախ եմ, վոր դուք աղեկ հասկցաք: Դեղ մը
տվեք, վոր շուտ մը անցնի:

Բժիշկը ծոցէն հանեց քերթակալը, թուղթ մը քաշեց
անոր մեջէն և մատիտով քանի մը բառ գծելէն յետքը
թուղթին վրա՝ Աբեսողոմ աղային տվավ գայն՝ ըսելով.

— Ասիկա կարմիր ջուր մ'է. ժամը մեկ անգամ
կխմեք անկից զահվեյի գավաթով. թեպետե քիչ մը լեղի
յե, բայց ազդու յե:

— Շատ աղեկ:

— Մոռցա հարցնելու, թե բնութիւնդ ի՞նչպէս է:

— Բնութիւնս... շիտակը խարդախ մարդերէն չեմ
ախորժիր. ամենուն հետ աղեկ կվարվիմ...

— Ամեն առտու դուրս կելլա՞ք,— հարցուց բժիշկը,
խոսքին ձևը փոխելու ստիպվելով:

— Հոս գալէն ի վեր յերկու առտու դուրս չկրցի
յելնել:

— Իրա՞վ կըսեք:

— Սուտ խոսելու ի՞նչ պարտք ունիմ:

— Ուրեմն դեղ մ'ալ գրեմ:

— Բժիշկը դեղագիր մ'ալ գրեց և Աբիսողոմ պղա-
յին տվավ:

— Նախ այս դեղը պիտի առնես,— ըսավ բժիշկն,—
վորպեսզի վաղը առտու դուրս յելնես և վերջը մյուս
շուրը պիտի խմես:

— Յեթե այս դեղեն խմեմ, վաղը առտու անպատ-
ճառ դուրս կընա՞մ յելնել:

— Այո՛, անպատճառ:

— Աս ի՞նչ աղվոր դեղ ե... հապա թե վոր դարձյալ
հյուրեր գան և զիս խոսքի բռնե՞ն:

— Հյուրերդ ի՞նչ փառ ունին:

— Ի՞նչպես փառ չունին. յերկու առտու յե, վոր
դուրս յելնել կուզեմ և թող չեն տար. կուգան յերկու
ժամ գլուխ կցավցունեն: Բայց վաղը առտու անպատճառ
պիտի յելնեմ, վասնզի պատկերս քաշել պիտի տամ:

— Բժիշկը դարձյալ հարցման ձեռն փոխեց՝ ասելով.

— Փորդ ի՞նչպես ե:

— Ամենուն փորին պես փոր ե:

— Պի՞նդ ե:

— Ո՞վ գիտե... իրավ վոր որ մը որանց հետաքրքրու-
թյուն ունեցած չեմ հասկնալու համար, թե պի՞նդ ե,
թե վոչ. ո՞վ պիտի նայի անանկ բաներու:

— Աբիսողոմ աղա, ամեն որ մեծ գործ կընե՞ս,—
հարցուց վերջապես բժիշկը՝ ճարը հատնելով:

— Այո՛, այո՛ ամեն որ մեծ գործ կտեսնեմ:

— Շատ լավ,— պատասխանեց բժիշկն,— յես վաղը
առտու նորեն կուգամ ձեզ տեսնելու:

— Կըլլա:

— Մնաք բարով, հոգ մի՛ ընեք, ձեր տկարությունը
քանի մը դեղով կանցնի:

— Շնորհակալ եմ:

Բժիշկն գլխարկն առնելով մեկնելու վրա յեր, յերբ
Աբիսողոմ աղան ըսավ անոր.

— Գրելիքդ չմոռնաս:

Բժիշկը խորհիլ սկսավ, թե ինչ եր գրելիքը և շուտ
մը հիշելով պատասխանեց.

— Այո՛, այո՛, միտքս ե. լրագրի մը մեջ պիտի գրեմ
ձեր անունը: Մնաք բարով:

— Յերթաք բարով:

Բժիշկն մեկնելուն պես Աբիսողոմ աղան ըսավ ինքն
իրեն.

«Վախցա, վոր բժիշկը կըսե, թե—դուն հիվանդու-
թյուն մը չունիս, և շինծու հիվանդ ըլլալս հայտնի կըլլա.
բայց պարապ տեղը վախցած եմ, վասնզի անիկա վոչ
միայն չհասկցավ հիվանդ չըլլալս, այլ ըսավ նաև թե՞
քանի մը դեղով կանցնի հիվանդությունս: Ե՛հ, պարոն
բժիշկներ, դուք բան մ'ալ չեք հասկնար, և մամս իրա-
վունք ունեք բնավ բժիշկ չկանչելու: Յես բան մը չու-
նիմ, տեր բժիշկ. անունս լրագրի մեջ գրել տալու համար
հիվանդ յեղա...»:

ԱԲԻՍՈՂՈՄԸ ՅԵՎ ԴԵՐԱՍԱՆԸ.

Սենյակին դուռը նորեն բացվեցավ, և քսան հինգ տա-
րեկանի մոտ միջահասակ պատանի մը դողդոջուն քայլե-
րով ներս մտավ և նամակ մը հանձնեց Աբիսողոմ աղային,
վոր նամակը չբանալով հարցուց բարեկությամբ.

— Ի՞նչ կուզես, մա՛րդ:

— Մեջը գրված ե,— պատասխանեց պատանին թու-
թովելով:

— Դուրսը մեջը քեզի ըլլա, ի՞նչ կուզես, ըսե՛:

— Վաղը իրիկուն ներկայացում մը պիտի տամ իս

հաշվույն համար, և ձեր ազնվության ոթյակի մը տոմսակ բերի:

— Յես չեմ ուզեր,— պատասխանեց Աբիսողոմ աղան, նամակը պատանվույն յերեսը նետելով:

— Տաս տարիյե ի վեր,— ըսավ պատանին,— թատերական բեմին վրա կը քալեմ...

— Թող նստեյիր,— պոռաց Աբիսողոմ աղան:

— ... և ազգին ծառայութիւն կընեմ:

— Աղայութիւն ընեյիր Թող. ինչո՞ւս պետք իմին:

— Տասը տարիյե ի վեր ե, վոր բարոյական դպրոցի մը մեջ ազգին վարժապետութիւն կընեմ:

— Ի՞նչ փույթ ինձի:

— Յե՛վ իրավունք ունիմ, կարծեմ, ինձի համար տըր-վելիք ներկայացման ձեզի պես ազնիվ մեկն ալ հրավիրել:

— Յես պետք չունիմ:

— Յեթե դուք ոթյակ մը չեք ընդունիր, վորո՞ւ ուրեմն տամ ոթյակի տոմսակներն:

— Ուր ուզես, հոն տար, ատ իմ խառնվելու բանս չե:

— Կաղաչեմ, մի՛ մերժեք այս տոմսակն. յեթե մերժելու ըլլաք, զիս փողոցներու մեջ խայտառակ ընելու պատճառ պիտի տաք:

— Գնա՛ բանդ, յես ձանձրացա այդ տեսակ խոսքեր մտիկ ընելէ:

— Ա՛հ, յեթե ասկից ձեռնունայն հետ դառնամ, իմ մահս պիտի տեսնեմ:

— Քեզ մտիկ ընելու ժամանակ չունիմ:

— Մեկ փոսկիի բան ե, ընդունեցեք զայն, կաղաչեմ, մեծ հուսով յեկած եմ հոս, պարապ յետ մի՛ դարձնեք զիս:

— Դուրս յե՛լ, գնա, քե՞զ մտիկ պիտի ընենք հոս:

Սենյակին դուռը նորեն բացվեցավ և հիսունը անցած մարդ մը ներս մտավ հանկարծ և իր խոսքերն Աբիսողոմ աղային ուղղելով

— Չե՞ս խաչիր (ամաչում) դուն,— հարցուց:

— Ինչո՞ւ պիտի խաչիմ,— պատասխանեց Աբիսողոմ աղան շվարելով:

— Ինչո՞ւ խեղճ աղան յերկու ժամե ի վեր հոս կըս պասցունես:

— Ո՞վ կապացունես. ո՞վ կուզե, վոր սպասե, կվոճն դեմ՝ չերթար:

— Կվոճնես, բայց առանց մի վոսկի պարտք տալու:

— Ո՞վ պարտք ունի անոր:

— Դո՛ւն ունիս, և յեթե ան չըսեր ինձի, թե քեզմե առնելիքն այս իրիկուն պիտի առներ և ինձի պիտի տար, յես չեյի տպեր այդ տոմսակներն և ներկայացման ազդերը: Յերկու ժամ ե, վոր վարը դռան առջև կապասեմ, վոր իջնա և պարտքը տա, և դուն հոս կխաղցունես խեղճը:

— Աս ի՞նչ ե, յես անոր պարտք ունենամ... ամենեին:

— Յես անպատճառ առնելիք ունիմ չըսի քեզի, պարո՛ն տպարանապետ,— ըսավ դերասանը,— ըսի, թե ոթյակի տոմսակ մը պիտի տամ, վոսկի մը պիտի առնեմ:

— Ինչո՞ւ ուրեմն խաբեցիր զիս, ստախո՛ս:

— Վորպեսզի ծանուցումները յետ չմնան:

— Յես քո խաղալի՞քդ եմ:

— Ինչո՞ւ խաղալիքս ըլլաս:

— Թշվառակա՛ն, խայտառա՛կ, անամո՛թ, աներե՛ս...

— Ասոնց ամենն ալ դո՛ւ յես:

— Դո՛ւ յես:

— Յես չեմ, դո՛ւ յես:

— Յես յեմ, դու յես-ի վրա ծեծկըվանք մը կծագի դերասանին և տպարանապետին մեջտեղ...

— Վա՛ր իջեք,— պոռաց Աբիսողոմ աղան,— վա՛ր իջեք և հոն կովեցեք:

— Դուն մեր կովույն խառնվելու ի՞նչ իրավունք ունիս. դուն զիս չես կրնար վոճնել. յես առնելիքս կու-

դեմ, և ինձի պարտական յեղողն ուր վոր գտնեմ, հոն կընամ մտնել:

— Դո՛ւն վար իջիր,— ըսավ դերասանին Աբիսողոմ աղան:

Ի՞նչպես իջնամ. տեսար վոր աչքիդ առջև ինչեր ըրավ:

— Մինչև վոր ան չիջնա, յես քայլ մը չեմ առներ,— կըկնեց տպարանատերը:

— Մինչև վոր ան չհեռանա, յես չեմ կընար փողոց լեկնել:

— Յե՛ս կիջնամ ուրեմն,— ըսավ Աբիսողոմ աղան:

Դերասանը Աբիսողոմ աղային ծունկերուն փաթթվելով աղաչեց, վոր վոսկի մը փոխ տա գոնե: Աբիսողոմ աղան շատ ընդդիմանցավ, բայց հետո տեսնելով վոր անոնց ձեռքն ուրիշ կերպով փրկվելու ճար չկա, ահուհները կըճտելով՝ հանեց բարկությամբ վոսկի մը տվավ տպարանապետին, վոր շնորհակալություն հայտնելով՝ դուրս յեկավ: Դերասանն ալ ներումն խնդրելով վար իջավ և գնաց:

ԱՌԻՍՈՂՈՄԸ, ՍԱՓՐԻԶԸ, ՔԱՀԱՆԱՆ ՅԵՎ ՇՈՒՇԱՆԸ.

Առավոտյան կանուխ Աբիսողոմ աղան յեկավ անկողինն, յերեսը լվաց, հագվեցավ, տունն դուրս յեկավ և շիտակ պատկերահանին գործատունը գնաց՝ լուսանկար պատկերը քաշել տալու համար:

Քանի մը վարկյանն կուգա և սափրիչը, վոր գլուխն ծռելով և հետ-հետ յերթալով հարգանքներ կմատուցանե Աբիսողոմ աղային:

— Յեկուր սա մազերս շտկե նայինք, կըսե Աբիսողոմ աղան:

— Պարտքերնիս ե,— կպտտասխանե սափրիչը:

Աղեկ մը շտկե, վորովհետև պատկերս հանել պիտի տամ:

— Գլխուս վրա: Աբ... —

— Յես շատ կարևորություն կտամ գլխուս:

— Ինչո՞ւ չտաք, վսեմապատիվ տեր... Ա՛խ... յեթե դուք չտաք, ո՞վ տա: Ա՛խ յերանիթե յես ալ ուրիշ մտմտուք չունենայի և...

— Շտկուտե նայինք:

— Գիտեմ, վոր յես հանցավոր եմ ձեզի քարի յեկախի չգալու համար, բայց ի՞նչ ընեմ... պարագաները թող չտվին, վոր կարենայի կատարել այդ պարտականությունս և այսոր յերես ունենայի աղաչելու ձեր վսեմության, վոր...

— Վերջը կխոսինք, սա մազերս սանտրե... մարդը (նկարիչը) կսպասե ինձի:

— Վնաս չունի, անիկա կսպասե: Աղաչելու ձեր վսեմության, վոր, յեթե կարելի յե հիսուն-վաթսուն վոսկի մը... յես ալ ազգային սափրիչ մ'եմ:

— Ի՞նչ ըսել ե հիսուն-վաթսուն վոսկի...

— Կխնդրեմ, մի՛ բարկանաք, հիսուն-վաթսուն վոսկի փոխատվություն մ'ընեյիք ինձ, վորպեսզի այդ գումարն Բարիկ Ղրկեյի տղուս, վոր այդ գումարով պարտքերը տար ու բժշկության վկայական առնեք դար, ու քանի մը տարիյն վաստակեք ու տոկոսովն ձեզի հատուցանեք: Բայց ի՞նչ ոգուտ, վոր այսոր յերես չունիմ ասանկ առաջարկություն մը ձեզի ընելու, վորովհետև քարի յեկախի ջարկությունն մը ձեզի ընելու, վորովհետև քարի յեկախի յեկած ըլլայի ձեզի, հաշեկա ձեզի: Յեթե Բարի յեկախի յեկած ըլլայի ձեզի, հարձակություն կունենայի ձեզի աղաչելու, վորաս պզտիկ խնդիրքս կատարեյիք. բայց քանի վոր քարի յեկախի չեկա ձեզի, դուք ալ իրավունք ունիք խնդիրքս մերժելու, թեև ազգային արհեստավոր մ'ըլլամ:

— Հիմա ատանկ խոսքեր մտիկ ընելու ժամանակ չունիմ ինչ վոր պիտի ընես նե՛ ըրե... Աս ի՞նչ տարորինակ քաղաք ե, բարև ասածու բարին՝ փառա տուր... մեկու

մը բարե տալու չե... ամեն բան սահման մ'ունի, եֆենտիմ... Հասկցա, ժամ առաջ փախչելու յե այս քաղաքեն...

— Կերևի, թե եֆենտին բարկացուցած են, — ըսավ ներս մտնելով տարիքը հիսունին և վաթսուներեք մեջ կորսված քահանա մը:

— Աս չքաշվիր, տեր հայր:

— Վողջո՞ւյն, որհնած. թեպետե դուք զիս չեք ճանչնար, բայց յես ձերին ով ըլլալն շատ աղեկ գիտեմ... Ինչպե՞ս եք, պատվական քեֆերնիդ աղե՞կ ե:

— Շիտակը աղեկ չե:

— Աստված չընե. աստուծով քիչ ատենեն ավելի աղեկ կըլլա: Ձեզի հետ քիչ մը առանձին մնալ կուզեյի: (Սափորիյին) քիչ մը դուրս կելա՞ք: Յես քեզ համար ալ կխոսիմ. եֆենտիյեն կհասկնամ խնդիրքդ և յես ալ կբարեխոսեմ, վոր ի նպաստ քեզի բան մ'ընե: Եֆենտի, սափորիչինիս ալ, գիտեք ա, ազգայիններեն ե. անոր ալ յերակներուն մեջ Հայկա արյունը կեռա, անտես ընելու չե զանոնք ալ... (Սափորիյը կերթա): Ձեզի հետ մասնավոր և առանձին տեսակցություն մ'ընել ուզելուս պատճառը սա յե, վոր հրամանքնիդ կարգվիլ կուզեք յեղեր... և ինչո՞ւ չկարգվիք: Իմացա նե՝ շատ ուրախացա. և ինչո՞ւ չուրախանայի: Ձեզիպեսներն կարգվելու յեն, վոր ազգերնուս մեջ հարուստ տղայք շատնան: Աղվոր աղջիկ կփնտռեք կոր յեղեր... և ինչո՞ւ չփնտռեք. յես ալ ձեր տեղն ըլլայի նե՝ յես ալ կփնտռեյի: Ստակ ալ կուզեք կոր յեղեր քիչ մը... ինչո՞ւ չուզեք, առանց ստակի կարգվիլն ալ շիտակը աղեկ բան մը չե: Արդ, յես իմ ձեռքիս տակն ունիմ անանկ աղջիկներ, վոր թե աղվոր են և թե հարուստ:

— Շնորհակալ եմ, որ մը կնայինք, աչքե կանցունենք զանոնք: Յեթե կուզեք, քիչ մը սպասեցեք, աս պատկերս քաշել տամ ու յերթանք: Շիտակը խոսելով յես ուրիշ գործ չունիմ հոս. աղջիկ փնտռելու յեկած եմ, քանի

մ'որ պիտի մնամ. յեթե կրցի գտնել, կարգվիմ պիտի հետն ու առնեմ պիտի յերթամ. յեթե չգտնեմ, դարձյալ պիտի յերթամ, վորոհետե հոս հանգիստ չեն թողուր զիս վայրկյան մը. ալ ձանձրացա:

— Իրավունք ունիք, ժամանակներն ալ դեշ են, եֆենտիս. դրամական տաքնապ, տաքնապ դրամական ամենուրեք կտիրե. ազգին աղքատները շատ են: Ինչ վոր ե, կըսպասեմ ձեզի ու ի միասին կերթանք:

Արիսողոմ աղան կանցնի լուսանկարի սրահը: Քահանան կմնա մենակ և կսկսի խորհրդածել, թե՝ «Ինչ ճամբա բռնեմ, վոր աս ձմեռվան ածուխիս ու փայտիս ստակն սա մարդեն փրցնեմ»:

Քահանան խորհրդածության մեջ եր, յերբ սափորիչն ներս մտավ նորեն ու քահանային ըսավ.

Տեր հայր, գործս ավրեցիր. յեթե ներս չմտնեյիր, քանի մը վոսկի պիտի փրցնեյի յես այդ մարդեն. տվող ե կոր կըսեն, տվող... Ինչ պիտի ընենք հիմա:

— Յես քեզի համար կբարեխոսեմ, դուն ալ ինձի համար միջնորդե. գոնե մեյ մեկ կտոր բան փրցնենք սա մարդեն:

— Շատ աղեկ:

— Հիմա հոս պիտի գա. յես անոր ականջն ի վարկըսեմ, վոր այս սափորիչը գոհ ըրե, վորովհետե շատ հարուստ տուներ կմտնե, կեղնե և կընա, յեթե ուզե, գործդ ավրել:

Գործը ի՞նչ ե:

— Հարուստ աղջիկ մը կփնտռե կոր:

— Աղեկ, յես ալ կըսեմ, վոր քահանայեն զատ մեկու մը մի՛ վստահիր:

— Շատ աղեկ:

— Աս աղեկ ճամբա յե...

— Արիսողոմ աղան զվարթ դեմքով կզառնա սենյակն, ուր քահանան սափորիչին հետ կխոսեր:

— Ներեցեք, Արիստոգոմ աղա,—կըսե սափրիչն,—ձեզի այս խնդիրքն ընելու համար. սաւայն յես կը կարծեյի, թե կրնայի իմ կողմեն յես ալ ծառայութիւն մ'ընել ձեզի:

— Արիստոգոմ աղա, պետք ե գիտնալ, վոր—կըսե քահանան,—մեր սափրիչ եֆենտին գրեթե մայրաքաղաքիս բոլոր հարուստ տուները կ'մտնե, բոլոր աղջիկները կ'ճանչընա:

— Ի՞նչ կըսեք:

— Այո՛, ինքն ալ բարի մարդ մ'ե. կատարեցեք խընդիրքը, մեղք ե:

— Արժանապատիւ հորեն մի՛ գատվիք, յեթե անանկ միտք մ'ունիք. տեր հոր ձեռամբ կարգված յերիտասարդներն միշտ գոհ մնացած են: Ուրախ եմ, վոր ձեր գործը տեր հոր պես բանիբուն և գործունյա քահանայի մը ձեռքն ինկած ե. վստահ յեղեք, վոր յերջանիկ պիտի ըլլաք, ձեր ամուսնութեան մեջ:

— Բայց դուք ալ պիտի ոգնեք ինձի, տեր սափրիչ,—կհարե քահանան,— ձեր աջակցութիւնն ալ պետք ե...

— Կընեմ, ինչ վոր կարող եմ ընել:

— Շնորհակալ եմ, Արիստոգոմ աղան ոտարական չե, ազգային ե, կարգվելու համար յեկած ե հոս, մեր պարտքն ե ոգնել իրեն:

— Հարկավ, մանավանդ թե ինքը շատ բարի ու առաքինի մարդ մ'ե:

— Յերեսին խոսել չըլլա, ընտիր մարդ մ'ե:

— Պատվական մարդ ե...

Տիկին Շուշան Արիստոգոմ աղային տունեն տեղեկացած եր, թե... քահանան Արիստոգոմ աղային գտնելու համար պատկերահանին գործատունն գնացած եր: Ուստի վորսն քահանային հափշտակել չտալու համար հեալով կվազեր դեպի պատկերահանին գործատունը, ուր կհաս-

ներ ճիշտ այն վայրկյանին, հորում քահանան սափրիչին վարպետութեամբ ճամբելե հետո՝ Արիստոգոմ աղային կբարոյախոսեր հետևյալ կերպով. «Ներեցեք, վոր քիչ մ'ուշացա ճշմարտութիւնն ձեզի հայտնելու սափրիչի մասին: Այս սափրիչը աներես մարդ մ'ե. բոլոր Պոլիս յեկողներուն ոճիքն կըռնե և անոնցմե ստակ կորզելու կաշխատի: Անպիտանին մեկն ե: Իմ պարտքս ե, վորպես խոստովանահայր, զգուշացնել զձեզ այս կարգի մարդերեն: Վորք միմիայն քանի մը վոսկի հափշտակելու նպատակով կ'մոտենան հարուստներուն: Վորքա՛ն կատեմ այդ մարդերը:

— Շնորհակալ եմ ձեր բարեսրտութենէն և մարդասիրութենէն

— Յերես մի՛ տաք այդ մարդոց:

— Վո՛չ:

— Տեր պապա, դու ի՞նչ գործ ունիս Արիստոգոմ աղային հետ,—կհարցնե տիկին Շուշանն*), վոր ինչպես ըսինք, հեալով հասած եր:

— Պատիկ գործ մը:

— Վո՛չ, բնավ գործ պիտի չունենաս դուն անոր հետը. դուք ձեր պարտքը կատարեցեք և թող տվեք, վոր մենք ալ մերինը կատարենք. ալ խպնեցեք քիչ մը: Յերթանք, Արիստոգոմ աղա:

— Վո՛չ, դո՛ւք խպնեցեք քիչ մը. մենք Արիստոգոմ աղային հետ պատիկ գործ մ'ունինք: Յերթանք, Արիստոգոմ աղա:

Յեւ քահանան Արիստոգոմ աղային ձախ թևէն կքաշե:

— Տեր պապայի մը չվայլեր ըրածդ:

— Լո՛ւ:

— Չպիտի լռեմ:

*) Շուշանը միջնորդ (մոցիբուլ) եր և Արիստոգոմին խոստացել եր նրա ճաշակի հարմար հարսնացու գտնել:

Ծ, Կ,

— Թող տվեք թեևրա:

— Թող չե՛մ տար,—կպատասխանե տիկին Շուշան,
—ի՛մ իրավունքս ե:

— Վո՛չ, ի՛մ իրավունքս ե:

— Քանի մը հարյուր դահեկան առնելու համար կու-
զես, վոր խեղճ մարդը թշվա՞ռ ընես. դուն աղջիկ չե՛ս
ճանչնար:

— Մի պոռար. պիտի թողում, վոր կողոպտես այս
ազնիվ մարդն, այնպես չե՛:

— Ինչո՞ւ կռիվ կընես, ամոթ չե՞... յես չեմ ուզեր
աղջիկ:

— Չըլլար,—կպատասխանե տիկին Շուշան,—մենք
քեզի աղջիկ մը պիտի գտնանք. բայց թե վոր տեր պա-
պային ձեռքով աղջիկ փնտռես, գիտցած յեղիր, վոր պա-
տիվդ մեկ ստրկի կըլլա:

— Ընդհակառակն, քահանայի՛ ձեռամբ աղջիկ փրնտ-
ռողն ե պատվավոր: Յերթանք Աբխաղոմ աղա:

— Թող չե՛մ տար:

— Յերթանք, Աբխաղոմ աղա:

— Թող չեմ տար, վոր յերթա. յես անոր աղջիկներ
պատրաստած եմ, աղջիկտեսի պիտի յերթանք:

Այս տեսարանը տեղի կունենար պատկերհանին գոր-
ծատան առջև և անցնողներեն պզտիկ խումբ մը հանդիսա-
կանի պաշտոն կվարեր անդ, յերբ Մանուկ աղան ստիպ-
ված Աբխաղոմ աղան անպատճառ գտնելու, յեկավ հոն,
տեսավ Աբխաղոմ աղան, վորուն մեկ թեևն քահանան և
մյուս թեևն տիկին Շուշան կքաշեր, քանի մը ծանր խոս-
քեր ուղղեց քահանային և տիկին Շուշանին և հեռացուց
զանոնք:

ՊՏՈՒՅՏ ՄԸ ՊՈԼՍՈ ԹԱՂԵՐՈՒ ՄԵՁ.

«Հոսոսի ձեռատետրին» կցված ե նաև Պարոնյանի
մի այլ գործը—«Պատույտ մը Պոլսո թաղերու մեջ», վոր
տալիս ե Պոլսի թաղերի զավեշտական պատկերը: Յերգի-
ծաբանին զբաղեցնողը վոչ այնքան թաղերի տեղի, դերքի,
կլիմայի և այլն նկարագրությունն ե, վորքան թաղեցի-
ների—ժողովրդի հասարակական բարքն ու վարքը, կեն-
ցաղը, կուլտուրական կյանքը:

Այդ դրվածքից տալիս ենք չորս թաղի պատկեր՝ վո-
րոշ կրճատումներով:

Հ. Հով.

1. ՄԻՋԱԳՅՈՒՂ.

Այս թաղին մեջ յերկու յեկեղեցի կա. միունյն անունը
Աստվածածինն ե, մյուսինը Լուսավորիչ: Թաղիս Աստվա-
ծածինը սահմանադրական չե, ամեն այցելուները միևնույն
յեղանակով չընդունիր. հարուստ այցելու մը տաճարեն
ներս մտնելուն պես՝ ժամակոչ յեղբայրները իրար կանց-
նին աթոռ մը գտնելու և հյուրին քովը դնելու համար. իսկ
յերբ այցելուն աղքատ ե, հրաման կընդունի զետնի վրա
աղոթելու: Հարուստները գատկին կամ ծնունդին միայն
կուզան յեկեղեցին և շատ անգամ ալ անձամբ չկրնալով
ներկա գտվիլ, իրենց այցետոմսը կը դրկեն յեկեղեցին:

Այս յեկեղեցվունյն վերնատունեն ամեն տարի տեղ
կը ծախվի կամ վարձու կը տրվի—թեպետև լրագիրներու
մեջ ծանուցում չըլլար: Արդեն հարուստ տիկինները ամ-
բողջ վերնատունը ծախու առած են և տոնի որերը մեյ
մեկ պահապան կնիկ կը դրկեն հոն, վորպեսզի իրենց
տեղը պաշտպանեն ոտար կիներու հարձակումներու դեմ:

Թաղիս վարժարանը շատ կանոնավոր խեղճության մեջ կը գտնվի։ Շատերը կը զարմանան, թե ասանկ հարուստ թաղի մը վարժարանն ինչո՞ւ աղքատ մնա։ Վարժարանն անոր համար աղքատ է, վորովհետև թաղին մեջ հարուստներ կան։

Թաղիս ազգայինները քանի մը դասերու կը բաժնրվին։ Դաս մը կա, վոր միայն դիվանագիտական խնդիրներով կզբաղի։ Այս դասն յերբ զինետուն մտնե և յուր առջև ունենա ողիի շէշը, կը փափագի գիտնալ, թե կլաւթըն ինչ խոսած է Արևելյան խնդրույն վրա, թե Պիսմարկը ինչ ընթացք պիտի բռնե... և մինչև վոր ասոնց գոհացուցիչ պատասխանները չառնե, զինետունեն դուրս չեներ։

Մյուս դասը դիվանագիտական խնդիրներն ձանձրույթ կզգա. իրեն համար գիտնալու առաջին խնդիրն այն է, թե ողիի վրա աղած ձուկ ուտելու յե, մի՞ս, թե պտուղ. անա իրեն համար բարենորոգման խնդիր...

Դաս մ' ալ կա, վոր ամբողջ որեր վարսավիրայի խանութներու առջև կը պըտըտի վորոշում տալու համար, թե ինչ ձև տալու յե մագերուն, վոր որիորդ...ին հաճելի յերենա...

Թեթև դաս մ' ալ կա, վոր կիրակի որերը նավամատույցին վրա կսպասե, վոր որիորդ կամ տիկին...ին հետ բարձրաձայն յերկու բառ Ֆրանսերեն խոսի։

Դաս մ' ալ կա, վոր առևտուրի մեջ կորուսածն խաղի մեջ վաստակելու համար խորամանկություն կը խորհի։ Հարուստներն ալ ունին այս ախտը, բայց անոնք բամբասանքե զերծ են. վասն զի ինչ վոր ախտ է աղքատի համար, անմեղ զբոսանք կը համարվի հարուստի համար։

Թաղիս մեջ այն վոր չքեղ հագված է, կատարյալ մարդ է. իսկ այն վոր պարզ հագված է, մարդ կոչվելու արժանի չէ։

Ուր վոր ալ ըլլա, յերբ կը տեսնես կին մը, վոր հովհարով մը դեմքը կը հովհարե, նույն իսկ ձմեռվան ամենասաստիկ ցուրտ որերուն մեջ, վոր յերեսները մեյ մը աջ մեյ մը ձախ կը դարձունե կես ծիծաղով, վոր մեջքը միշտ կը կտարտե և յերկու բուպեյն անգամ մը գլուխը կը շտկե, վոր ձեռնոցները կըհանե, նորեն կը դնե, շրջագցեստը կը շտկե, չհափիւր, կը կանգնի, նորեն շտկելու ջանք կընե, յերբեմն բերանը բանալով դիտմամբ կը խնդա, վոր ակուսները ցույց տա—յեթե չխնդար, գիտցիր վոր բերանին մեջ ակուս չկա—հասկցիր, վոր այդ կինը միջագյուղցի յե։ Իսկ յերբ անոր քովը աղեկ հագնւրված յերիտասարդ մը գտնվի ու հետը խոսակցի յերբեմն Ֆրանսերեն բառեր գործածելով, այդ կնկան սիկարա (պապիրոս) հրամցունե և քթին մեջ մտնելու չափ մոտենա անոր, հազար վոսկիի գրավ դիր, վոր ասոնց յերկուքն ալ միջագյուղցի յեն. յեթե կորցնես հազար վոսկին, յեկուր ինձմե՛ առ։

Արևեն չայրելու համար իգական սեռն բրինձի փոշի կը քսե. բայց Միջագյուղի լուսինն արևու չափ կիզիչ ըլլալուն պատճառով գիշերներն ալ կը գործածե այն փոշին, վորուն վոմանք սկսած են հիմա տոմարէս խառնել։

Միւրուն որիորդները կամ տիկիներն, յերբ տուն մը այցելության յերթան, սանդուղիին յերկրորդ աստիճանեն կերկնցնեն իրենց վոտներն և սպասավորներու քաշել կուտան իրենց կոշիկներն, վորպեսզի պզտիկ վոտներն ամենուն ցույց տան։ Շատ մը կիներ ալ իրավամբ քաշել տված են իրենց ակուսները, վորովհետև մեծ էյին անոնք և մեծ ցավ կը պատճառեյին... գեղեցկության։

Տիկիներեն վոմանք կոմսուհիներու և մարքիզուհիներու նմանելու համար ամեն հնարք ի գործ կը դնեն։ Յերբ զավակ մը բերեն աշխարհ, իսկույն պոտտուի մը կը

հանձնեն զայն, վասնզի ազնվականության դեմ է, վոր կին մը յուր զավակին կաթ տա: Արդոք պիտի գա՞ այն որն, ուր սպասուհիներն բերեն իրենց տիկիններուն բերելիք զավակներն ալ, վորպէսզի փափկասուն տիկիններն ծննդաբերության ծանր գործեն ալ խալսին...

Թաղիս մեջ կան յերիտասարդներ, վոր ինքզինքնին միշտ բարձր դրից (դիրջի) մեջ կը գտնեն: Յեթե ասոր պատճառը փնտովի, դյուրին է համոզվիլ, վոր այդ յերիտասարդներն այդ չափ բարձր չպիտի կարծեյին զիրենք, յեթե ոգեն ավելի թեթեւ չըլլային: Դժբախտաբար մեր ազգին մեջ շատերու բարձրանալու գաղտնիքը բնական որենքով միայն կը լուծվի: Ծանրերը միշտ գետնաքարշ կը մնան, և թեթևները վեր կենեն:

Թաղիս ներքին բերքն է յեւակ և բամբասանք: Յեւակն ամեն տարի առատ չըլլար. իսկ բամբասանքն, վոր շատ անձրեւն կամ շատ յերաշտութենէն վախ չունի, ամեն տարի առատ հունձք կուտա: Շատ տեղերէն հոս կուգան այս ապրանքէն գնելու համար:

2. ՔԱՐԱԿՅՈՄՐՈՒԹՅՈՒՆ

Քարակոմրուկի յեկեղեցին ուխտատեղի յէ: Զավակ չունեցող այրերն ու կիները հոս ուխտի կուգան: Պարապ պտրտողները, իրենց սպասավորներուն իրավունքը ուտողները, իբրև ավանդ առնված աղամանդներն ուրիշի ծախողներն, վորք և այրիներուն ստակը կլտղներն ընդհանրապես հոս ուխտի կուգան:

Այս տեղի քահանաներն ալ քիչ-շատ ուսած են հրաշագործություն և յերբեմն-յերբեմն պզտիկ հրաշքներ ալ կը գործեն: Աստվածածնա պատկերին նվեր տրված գուտ փոսկիյն գոտի մը յերկու որվա մեջ պղնձի փոխվեցավ...

Յերբեմն ինքն իրմէն ասանկ այլակերպություններ

տեղի կունենան այս յեկեղեցվոյն մեջ, այլակերպություններ, վոր ուրիշ յեկեղեցիներու մեջ ալ պակաս չեն:

Թաղս ունի մեկ ուսումնարան և աղջիկների վարժարան մը: Վեց տարեկանէն վեր աշակերտ կամ աշակերտուհի չընդունվիր, վասնզի այս տարիքին մեջ հոն կը սորվին հայերեն, տաճկերեն, ֆրանսերեն, անգլիյերեն, գերմաներեն, սլավերեն, յերբայերեն, թվաբանություն, տրամաբանություն, պատմություն, աշխարհագրություն, կրօնագիտություն, գծագրություն, յերաժշտություն, բնագիտություն, քիմիաբանություն, փիլիսոփայություն, մարմնամարզություն, հոգեմարզություն: Հոս ընթերցանությունը իրենց մօրն արգանդին մեջ կուսանին: Թաղեցին յուր վարժարաններուն այս հրաշալի հառաջադիմությունն պարտավոր է ուսումնական խորհրդույն, վոր բնավ հոգ չըներ, նույնիսկ յեթե աչերովն ալ տեսնէ, վոր մասվածաւ մը վարժարանի տնօրենություն կամ հոգաբարձություն կընէ:

Յեթե այս վարժարանին մեջ գիտության տեղ ազիտության դասեր ավանդվեյին, առաջին կարգի վարժապետանոց մը կըլլար տգիտության:

Թաղեցիին վիճաբանության յեղանակին վրա թեթեւ գաղափար մը տալու համար կը հրատարակենք հոս վիճաբանություն մը, վոր յերկու հոգվո մեջ տեղի ունեցած է:

— Բարեկամ, այս տեսուչն մեր զավակներուն ապագան կսպաննէ:

— Վո՞չ, այս տեսուչն մեր զավակներուն ապագան կը շինէ:

— Խորհուրդ մը ընենք և սա տեսուչը փոխենք, մեղք է մեր զավակներուն:

— Ասանկ բան չըլլար, դուն քու նստած խանութիդ վարձը չես կընար վճարել և կենես ազգային գործերուն մեջ կը մտնես:

— Յես քեզի պես ուրիշին իրավունքը չեմ ուտեր, դուն ինձի աղեկ նայե:

— Բերանդ ժողվե՛, հիմա աթոռը գլխուդ կիջեցունեմ հա՛, անպիտա՛ն:

— Դուն ալ ասկե վերջը յեկուր տե, մեր տունեն կնկանդ համար շարսխա առ:

— Անցյալ շաբթու չե՞ր, վոր յեկար բանքարտն առիր և ուխտի գացիր:

— Քուկին ինչ վատ ըլլալդ ամեն մարդ գիտե:

— Վատը դո՛ւ յես:

Ծեծկըվուքը կսկսի, ապտակ և կից (աքացի) փոխանակվի կսկսին:

Յերրորդ մը կուգա և կը միջամտե...

— Բանքարտնի մը համար կվայելե՞ վոր...

— Վա՛տ ըսավ ինձի:

— (Ականջն ի վար) Դուն ալ այդ ավանակին խոսքին կարևորություն մի՛ տար:

— Ան ալ ինձի անպիտան ըսավ:

— (Ականջն ի վար) Ամո՛թ ե, այդ իշուն խոսքերուն կարևորություն կուտաս: (Բարձր) Հաշտվեցե՛ք, յեղբայր եք դուք... բայց այս բանքարտնի խնդիրն ինչպե՞ս ծագեցավ:

— Վարժարանի վրա խոսք բացվեցավ...

— Վարժարանին բանքարտն պիտի հագցունեյիք. ի՞նչ պիտի ընեյիք վոր...

— Ձե, տեսուչը...

— Առնենք, յեղբայր, առնենք: Տեսուչին բանքարտն մը առնենք, ի՞նչ կըլլա յեղեր:

— Ձես հասկնար, յեղբայր, խնդիրը վարժարաններու վրա յեր:

— Վարժարաններո՞ւ համար կը վիճաբանեյիք:

— Այո՛:

— Դուք յերկուքնիդ ալ ավանակ եք յեղեր. վարժա-

րանի մը համար իրարու սիրտ կոտրել ի՞նչ պիտի ըլլա. յես ալ կարծեցի, վոր ոգտակար բանի մը համար կը վիճեյիք... ա՛յ ավանակներ...

3. Բ Ե Ր Ա

Այս թաղին մեջ իգական սեռն ինքզինքն բոլորովին հայելիներու տված ե. ժամերով, որերով, տարիներով և դարերով հայելիներու առջև կը կանգնի և ինքզինքը կը գեղեցկացունե...

Կիներուն բամբասանքը հոս քիչ ե. յեթե յերբեմն բամբասանք մը ընել պետք ըլլա, խիստ քաղաքավարությամբ կը վարվին:

* * *

— Տիկին Ք... իմացա վոր Փ...ին կինը Չ...ին երիկը կսիրե յեղեր. բայց կխնդրեմ, վոր այս խոսքս գաղտնի մնա քովդ:

— Վստահ յեղիր, վոր մեկու մը չեմ ըսեր:

Լուր տվող տիկինը կը մեկնի, և տիկին Ք. յուր դրացվույն դուռը կը դռնե: Սպասավորը դուռը կը բանա:

— Տիկինդ վար կանչե, Մինա՛ս:

— Տիկինը չորս ժամ ե, վոր հագվելու համար սենյակը մտավ և տակավին չելավ:

— Շո՛ւտ գնա ըսե իրեն, վոր տիկին Ք... յեկած ե և կարևոր խոսք մը ունի ըսելու:

— Սպասավորը վեր կը վազե, իմաց կուտա տիկնոջը, վոր հագված ըլլալով վար կիջնա:

— Վե՛ր համեցեք, տիկին Ք...

— Ձեմ կընար, տիկին Շ... խոսք մը ունիմ և յերթամ պիտի, վասնզի գործ ունիմ տունը:

— Խե՛ր ե:

— Ինչպե՞ս խեր... Փ...ին կինը Չ...ին երիկը կը սիրե յեղեր. բայց վտաքդ պագնեմ, ուրիշ մի ըսեր, գաղտնի պահե. մնաք բարով:

— Ասանկ բան ուրիշին կըսվի... Անհոգ յեղեր:

Տիկին Ք... կմեկնի և տիկին Շ... սպասավորին կըսե.

— Սա հովանոցս ինձի բեր:

Հովանոցը կը բերվի և տիկին Շ... ձախ թևի փողոցը կը մտնե և տան մը դռուը կը զարնե: Դռուը կը բացվի. վեր կենե և կը ղիմավորվի խոշոր կնիկե մը:

— Հրամեցեք, տիկին Շ... կըսե տան տիկինը. հրամանքնիդ ալ հոս կուզա՞ք յեղեր. վո՞ր քամին փչեց ասանկ:

— Սանկ... ինչպե՞ս եք, աղե՞կ եք. ինչպե՞ս ե ձեր ամուսինը. Փ...ին կինը Շ...ին երիկը կը սիրե յեղեր. հիմա իմացա և շատ ցավեցա: Վոտքդ պազնեմ, չըլլա վոր ուրիշին զրուցես. վասն զի ինձի ըսողը պատվիրեց, վոր ուրիշ մեկու մը չըսեմ:

— Անհոգ յեղեր, կըսե, և տիկին Շ...ին մեկնելեն անմիջապես յետքը փողոց կը վազե յուր ծանոթներուն ավետիս տալու:

Բայց իրա՞վ ե, վոր Փ...ին Տիկինը Զ...ին երիկը կը սիրե. քավ լիցի... մեծ սուտ մ'ե, արդեն Փ...ին կինը յուր երիկն անդամ չը սիրեր: Փ...ին կինն որ մը այս լուրն ստեղծող տիկինին շրջագգեստն զիպվածով կոխած եր յեկեղեցվոյն մեջ և զայն քիչ մը պատռած եր, այդ տիկինն ալ Փ...ին կինն վրեժ լուծելու համար, ասանկ արատ մը քսելու յեկած եր անոր վրա:

Ամառվան յեղանակին այս թաղին մեջ ջուր չը գըտնվիր և թաղեցին կստիպվի առանց ջուրի անցունել... յուր ողին:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

1 ՊՐԱԿ.—1) Հակոբ Պարոնյան (կենսագրական): 2) Մեծապատիվ մուրացկաններ: 3) Պտույտ մը Պոլսո թաղերու մեջ: II ՊՐԱԿ.—1) Արևելյան ատամնաբույժ: 2) Պաղտասար աղբար: 3) Բաղաքավարութեան ֆնտռերը: III ՊՐԱԿ.—1) Ազգային ջոջեր: 2) Հոսոսի ձեռատետրը: 3) Ծիծաղ.



ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

50123

24643



Ա. ՓԱՐՈՆՅԱՆ.

Իզբրանն. սոչինենյա.

Վըքսն Ի.

Ու ղրմանսկոմ ղզ.

Զենթրալնոե Իզդատելստվո ՆարոդոՎ Տոյզա Տ. Տ. Ր.
Մոսկվա, Ուկոլսկայա, 10.